№ 167 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 1 ՕԳՈՍՏՈՍԻ

1912
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 1 ՕԳՈՍՏՈՍԻ № 167

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—3 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

Յայտարարութիւնների համար պիտի վճարել. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К°, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնոյում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՕԳՈՍՏՈՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 5 ՌՈՒԲԼԻ։

Օգոստոսի 1-ից մինչև սեպտ. 1-ը 85 կ.։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

ՄԱՆԹԱՇԵԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
(Թիֆլիս, Բէբուտովսկայա, № 50)
Լրացուցիչ քննութիւնները օգոստոսի 20-ից։
Ընդունելութեան քննութիւնները օգոստոսի 24-ից։
Ուսումնարանին կից բացվում է այբուբենական բաժանմունք։
(օ. մ.) առ. 557. 3—1

Թիֆլիսի Քաղաքային Ուպրավայից

Թիֆլիսի նահանգապետի կողմից «Кавказъ» լրագրի 1909 թ. ապրիլի 25-ի համարում յայտարարված սանիտարական մասի պարտադիր որոշումների երրորդ կէտը ասում է. «Ներկայ կանոնները հրապարակվելու օրից, երկու տարվայ ընթացքում, բոլոր տների բակերը պէտք է պատշաճաւոր եղանակով լինեն սալայատակված քարով, ցեմենտով կամ ասֆալտով, բացի պարտէզի կամ ծաղկանոցի համար նշանակված և ամայի մասերից։ Վերջինները պէտք է քարէ կամ փայտէ ցանկապատ ունենան և շարունակ մաքուր պահվեն»։

Ի նկատի ունենալով այն, որ յիշեալ ժամանակամիջոցն անցել է, Քաղաքային Ուպրավան խոնարհաբար խնդրում է այն պ. պ. տնատէրերին, որոնց տներում յիշեալ յօդուածի պահանջները չեն իրագործված, հոգ տանել հնգամսեայ ժամանակամիջոցում, հաշւելով այդպիսին ներկայ տարվայ օգոստոսի 1-ից, կատարելու այդ պահանջները, նախազգուշացնելով՝ որ չը կատարողները պատասխանատւութեան կենթարկվեն։
(առ.) 554. 3—3

ՇԱՄԱԽՈՒ հայոց ծխ. դպրոցի համար հարկաւոր է 25-ական դասի համար 20-ական րուբլի դասագնով հայոց լեզուի և այլ առարկաների համար ԵՐԿՈՒ ՈՒՍՈՒՑԻՉ։
Ռուսաց լեզուի համար ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ։
Հասցէն՝ Шемаха, Предсѣдателю Попечит. арм. церк.-прих. школы Артему Доліянцъ.
(առ.) 552 3—3

ԴԷՊԻ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ.

I

Մենք կանգնած ենք Պետական Դումայի ընտրութիւնների առաջ. իսկ մեր հասարակութիւնը դեռ ևս շատ քիչ հետաքրքրութիւն է ցոյց տալիս դէպի այդ ընտրութիւնները։

Դա տարօրինակ է ըստ երևոյթին։

Ի՞նչը կարող է աւելի գրաւիչ, աւելի հրապուրիչ լինել, քան ընտրել անդամ ազգային ժողովի, նոյնն է թէ համապետական օրէնսդրական ատեանի համար։

Պետական Դուման, որ պետութեան հաւաքական կամքի և ազգային ձայնի արտայայտութիւնն է, կոչում է Ռուսաստանի զանազան մասերը ուղարկելու իրանց ներկայացուցիչներին դէպի համապետական կենտրոնական ժողովատեղին, ուր պէտք է ազգը քննի իր կարիքները և նոր օրէնքներ մշակի ժողովրդի համար։

Արդարև դա վերին աստիճանի գրաւիչ և վեհագոյն շահագրգռութեան մի հանգամանք է, ոգևորող իւրաքանչիւր քաղաքացու՝ մասնակցելու համազգային գործակցութեան այն բարձր ասպարէզում, որը պէտք է նոր օրէնքներ տայ ազգին։

Մի՞թէ տասնեակ տարիների հանրային տենչանքը չէ եղել Պետական Դումայի հիմնադրութիւնը։ Մի՞թէ ամբողջ սերունդներ չեն տքնել և մաշվել ներկայացուցչական ատեան ունենալու համար։

Այո, այդ այդպէս է։ Պետական Դուման վաղուցվայ թանգագին իղձերի մարմնացման առաջին փորձն է Ռուսաստանի ժամանակակից սերնդի համար։

Եւ պէտք էր ենթադրել, որ հասարակութիւնը ամենամեծ խնամքով և դիւրազգաց նախանձախնդրութեամբ կը վերաբերվի իր պատգամաւորների ընտրութեանը՝ Պետական Դումայի կազմութիւնը աւելի լաւ անդամներով օժտելու համար։

Իսկ այսօրվայ մեր իրականութեան մէջ մենք ականատես ենք մի սառն, անտարբեր վերաբերմունքի դէպի ընտրութեան գործերը և չենք նկատում ջերմ շարժում՝ համախմբվելու ընտրական պարտաւորութիւնները լաւագոյն եղանակով կատար ածելու համար։

Ի՞նչ է պատճառը այդ անտարբերութեան։ Արդեօք մեր ընդհանուր անպատրաստութի՞ւնը լուրջ հասարակական գործերի համար, թէ՞ Պետական Դումայի վեցամեայ գործունէութեան սակաւ արդիւնաբերութիւնը, թէ՞ այն առանձին հանգամանքները, որոնք ստեղծվել են կովկասեան ընտրութիւնների համար և կամ վերջապէս կովկասեան պատգամաւորների իւրացրած աննշանակաւոր դերը Պետական Դումայի գործավարութեան մէջ։

Անկասկած՝ պատճառը բարդ հանգամանքների արդիւնք է, և մենք նրան չենք սպառի ներկայ հակիրճ մեր տեսութեամբ։ Մե՛նք կանգ կառնենք մի երկու կէտերի վրա, որոնք անհրաժեշտ են մեր հիմնական միտքը արտայայտելու և մեր առաջարկներին ընթացք տալու համար։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
30 յուլիսի

Պետերբուրգ.—Երեկոյեան ժամը 6-ին, Ֆերմերեան ապարանքում, Նորին Կայսերական Մեծութիւն Թագաւոր Կայսրին, Թագուհի Կայսրուհուն և Գահաժառանգ Արքայորդուն՝ Գահաժառանգի ծննդեան օրվայ տօնի առիթով բաղդ ունեցան շնորհաւորելու Կովկասի Փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրօնցով-Դաշկովը, Դոնեան շրջանի կօզակների ատաման Միշչենկօն և Կրասնոյէ Սելօյում բանակ դրած զօրամասերի հրամանատարների պատգամաւորութիւնը։ Բացի դրանից յատուկ պատգամաւորութիւններով շնորհաւորեցին նաև այն զօրամասերը, որոնց շէֆն է Գահաժառանգը։ Կիևի գրենադէրները Օգոստափառ շէֆին մատուցել են գնդի պաշտօնական համազգեստը, Գրուզինսկի գրենադէրները՝ Ախալքալաքի բերդի արծաթէ կաղապարը, Սալեանցինները՝ Ալէքսէյէվեան զօրանոցների տեսարանների ալբոմը և գնդի յօբելեանական նշանը։ Գվարդիական մասերի շնորհաւորութիւնների միջոցին ներկայ էր Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեվիչը, իսկ կովկասեան գլխաւորական շրջանի մասերին՝ Կովկասի Փոխարքան։

—

Պետերբուրգ.—Մինիստրների խորհրդի նախագահի մօտ ամարանոցում, Ելագինի կղզու վրա, մեծ դահլիճում ի պատիւ Պուանկարէի ճաշկերոյթ տրվեց։ Ամբողջ դահլիճը բոյսերով զարդարված էր, սեղանի վրա շարված էին ծաղիկներ, նուագում էր լարանուագ երաժշտախումբը։

—

Պարիզ.—Պուանկարէի Ռուսաստան գնալու մասին իտալական մամուլի գնահատութիւնը ի նկատի առնելով, «Տան» լրագիրը յայտնում է, որ բարեկամ Ֆրանսիան ուրախութեամբ է յիշատակում Իտալիայի տակտն ու իբրև ճիշդ ըմբռնողութիւնը ներկայ դէպքում, որը հասկանում է, որ ֆրանս-ռուսական դաշնակցութեան ամրապնդվելը ծառայում է խաղաղութեան և հաւասարակշռութեան պահպանմանը։ Ռուսաստանի ազդեցութեան զօրացումը արևելեան հարցերում անվտանգ է Իտալիայի համար, որովհետև Ռուսաստանը հիմք չունի նեղելու Իտալիային Աֆրիկայում, իսկ իտալական շահերի վերաբերմամբ Բալկաններում Ռուսաստանը ընդունում է Իտալիայի հայեացքները։

—

Պարիզ.—Ստորագրված է գեներալ Լիօտէյի և Մուլայ-Հաֆիդի միջև կայացած համաձայնութիւնը։ Վերջինս մինչև Ֆրանսիա ուղևորվելը կը հրաժարվի գահից։ Հաւանօրէն նրա յաջորդը կը լինի եղբայրներից մէկն ու մէկը։

—

Տիրնակ.—Ստաւրոպոլի գաւ. Տիրնակ աւանում այրվել են հրդեհից մօտ 400 տուն, եկեղեցին և վօլօստնոյ վարչութիւնը։ Հրդեհը ոչնչացրել է ահագին քանակութեան հացի բերքը։

—

Մօգիլև.—Զաւսկի գաւառի Բոխոտցա գիւղում հրդեհի ճարակ է եղել 53 տուն և երկու եկեղեցին։

—

Մօգիլև.—Կրիչևա գիւղում հրդեհումից այրվել են 114 տուն, դեղատունը, դպրոցը և անկելանոցը։

—

Մոսկվա.—Կալանաւորված է վարկային ընկերութիւնների կեղծ կուպօններ և կեղծ դրամներ պատրաստողների մի խումբ 25 հոգուց բաղկացած։

—

Կ. Պօլիս.—Դէյչէ բանկի տեղական բաժանմունքի վարչութիւնը տեղեկութիւն է ստացել Բերլինից, որ երբ Կիդերլէն-Վեխտէրը թողնում է պաշտօնը և ընդունում Դէյչէ բանկի Բերլինի վարչութեան նախագահի պաշտօնը ահագին ռոճիկով և որոշ ծրագրով՝ ընդարձակելու բանկի գործունէութիւնը Մերձաւոր Արևելքում, համաձայն Վիլհելմ կայսրի անմիջական ցուցմունքների։

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
30 յուլիսի

Կ. Պօլիս.—Ալբանացիները ըստ երևոյթին ընդհատել են ակտիվ դիմադրութիւնը։ Խաղաղ բանակցութիւնները յանձնաժողովի հետ շարունակվում են աշխուժութեամբ, սակայն ալբանացիների պահանջները համարվում են չափազանցութիւն։

Ցետինիէի դեսպան Ռուստէմ-բէյը, որ ինքնագլուխ կերպով ուլտիմատում էր յայտնել Չերնոգորիային և գնացել Կատարրօ, յետ կը կանչվի և հազիւ թէ որևէ ուրիշ պաշտօն ստանայ։ Նրա վրա կասկածում են, որ նա ձգտում էր բարդութիւն առաջ բերել՝ համաձայն «Միութիւն և Առաջադիմութիւն» կօմիտէտի ցուցմունքների, որին Ռուստէմ-բէյը պատկանում էր։

—

Սօֆիա.— Մակէդօնօ-օդրինեան եղբայրութեան նախաձեռնութեամբ կազմվել է Մակէդօնիայի ազատութեան պատերազմի կօմիտէտ, որը ոգևորված կոչով հրաւէր էր կարդում բոլոր քաղաքացիներին յուլիսի 31-ին հսկայական միտինգի Ազատարար Թագաւորի արձանի առաջ։ Յուլիսի 29-ին մի քանի քաղաքներում տեղի ունեցան միտինգներ և ընդունվեցին բանաձևներ՝ կառավարութիւնից պահանջելու ամենավճռական քայլեր անել յօգուտ Մակէդօնիայի ինքնավարութեան։

—

Կ. Պօլիս.—Առաւօտեան ստորերկրեայ թեթև ցնցում զգացվեց։ Հինգ շոգենաւեր են ուղարկված Մարմարա ծովի ափին վնասվածներին օգնութիւն հասցնելու։ Բազմաթիւ վիրաւորներ են բերված այստեղ։

Երկրաշարժի պատճառով դժբաղդութեան ծաւալի մասին հրատարակված պաշտօնական հաղորդագրութեան մէջ, ռազմագիտական տեսակէտից, չէ յիշատակված Դարդանէլի աւերման մասին։ Մինչդեռ իսկապէս գլխաւոր աւերածը պատահել է Դարդանէլում։ Քաղաքը համարեա բոլորովին քանդված է, հիւպատոսարանների շէնքերը սաստիկ վնասվել են, յունաց հիւպատոսարանը աւերակ է դարձել, ամրութիւնները վնասված են, թնդանօթները շատ տեղերում դիրքերից վայր են ընկել, զօրանոցների պատերի մի մասը ճեղքուածքներ է ստացել, մի մասն էլ քանդվել։

ՊՐՕՎՕԿԱՍԻՕՆԻ ԱՂՏՈՏ ՓՈՐՁ ՎԵՂԱՐԱԽՈՐԻ ՄԸ ԿՈՂՄԷՆ

Ուստր, 23 յուլիս (Ն. Տ.)

Նորէն Գաֆթանեան...

Այս մարդը, որ հրէշ մը ծնած ըլլալու տեղ սխալմամբ մարդ ծներ է, նոր աշխարհի հայ գաղթականութեան համար կատաղեալ մղձաւանջ մը դարձած է վերջերս։

Ամէն տեղ, ամէն անկիւն իր շահատակութեանց ու վատութիւններուն պատմութիւնն է որ կը լսուի։

Ու հանդէպ այս լուրերուն՝ չէ կարելի լռել, չէ կարելի չխօսիլ։

Պարագաներ կան երբեմն, որոնց վրայէն մարդ լռութեամբ կանցնի ու արհամարհանքով կը դիտէ զանոնք. բայց կան պարագաներ ալ, որոնք մարդուն կարկամած լեզուն համրութենէ դուրս կը բերեն և խօսեցնել կուտան անոր նոյնիսկ յակամայից։

Այսպէս է Գաֆթանեանի պարագան։ Ամերիկահայը երկար ատենէ ի վեր լռեց ու իր լեզուն զամուած պահեց այս մարդուն տգեղ և նոյնքան ալ վատահամբաւ արարքներու մասին։ Ամերիկահայը պարզապէս խուսափեցաւ իրմով զբաղելէ, անոր համար՝ որ ան ոչնչութեան համահաւասար արժէքէ մը տարբեր յատկութիւնով չէր ներկայանար հոս, և կը ճանչցուէր միայն անճարացած, այլ կեղծաւոր վեղարաւոր մը։

Այսօր սակայն ուրիշ փուլի մէջ մտած է և ուրիշ գոյներով ներկուած։

Ամերիկահայ եկեղեցական կազմակերպութեան դէպի զինքը ցոյց տուած անհամակիր և բացասական վերաբերմունքէն յուսահատ՝ այժմ պրօվօկասիօնի աղտոտ փորձեր սկսած է կատարել այս գաղթականութեան մէջ։

Յուլիս 14-ի կիրակին Նիւ-Եորքի մէջ ժողով մը կը սարքէ և Նորընտիր Վեհ. Կաթողիկոսի հայրապետական օծումը շնորհաւորելու պատրուակին տակ՝ իր հետևորդները կը գրգռէ, ըսելով թէ Մուշեղ եպիսկ. ամերիկահայ թեմը Մայր Աթոռոյ իրաւասութենէն դուրս պիտի հանէ և Կիլիկիոյ աթոռին միացնէ։ Այս առիթով կը յարձակի նաև Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան, տիար Մ. Գարակէօզեանի (գորգի հանրածանօթ վաճառական), տիար Ց. Կիւլպէնկեանի (նոյնպէս գորգի վաճառական), «Armenia»-ի յարգելի խմբագիր տիար Արշակ Տ. Մահտեսեանի, «Կոչնակի» պատ. խմբագրութեան և շատ մը ուրիշ պատուաւոր անձերու վրայ, անոնց հասցէներուն անլուր հայհոյութիւններ տեղալով։

Իրեն ընկերակից ունի եղեր այս ժողովին մէջ դաշնակցական պարոն մը և վերակազմեալ-հնչակեան (իմա արդուեանական) մը, որոնք նոյնպէս իրենց կարգին կը հայհոյեն Մուշեղ եպիսկոպոսին և վերոյիշեալ պատուական ազգայնոց։

Գաֆթանեան իր այս աղտոտ պայքարին մէջ դաշնակից ունի դաշնակցականներն ու արդուեանականները (Ունճեանի, Թավշանճեանի և յաւէտ ողբացեալ Ա. Արփիարեանի սպանիչները), որոնք իրենց կողմնակի հաշիւներն ունին, զոր կը փափաքին մաքրել, եթէ այդ հնարաւոր ըլլայ։

Կիմանանք թէ՝ Գաֆթանեան այս ժողովին կողմէ հեռագրած է Վեհ. Հայրապետին, խնդրելով Մուշեղ եպիսկոպոսի հեռացումը Ամերիկայէն, ամբաստանելով նորին սրբազնութիւնը որպէս թեմը Էջմիածնէն զատող մը։

Ի՜նչ ապուշ և միանգամայն որքան ստորին զրպարտութիւն...

Մայր Աթոռին և անոր արժանաւոր Գահակալին հանդէպ Մուշեղ եպ. յարգանքի ամենախորին զգացումը տածած է և կը տածէ միշտ։

Մուշեղ եպ. ո՛չ մէկ պարագայի տակ կասկածել տուած է ամերիկահայ ժողովրդեան, թէ այս թեմը Էջմիածնէն բաժնելու փափաք մը ունի իր մէջը։ Ընդհակառակն, յուլիս 7-ին Ուստր գումարուած երեսփ. ժողովին մէջ քուէարկուած այն բանաձևը, որով այս Թեմին բարոյական կապը Մայր Աթոռոյ հետ ալ աւելի կամրապնդուէր, պատրաստողն ու առաջարկողը նոյն ինքն Մուշեղ եպիսկոպոսն էր։ Ասկէ աւելին բաւական չէ՞ ապացուցանելու Գաֆթանեան վեղարաւորին ու իր դաշնակիցներուն աղտոտ պրօվօկասիօնները, Էջմիածնի Գահակալին ու ամերիկահայ առաջնորդական Թեմին միջև խրամատ մը բանալու և պատասխանատուութիւնը Մուշեղ եպիսկոպոսի վզին փաթթելու։ Բայց կը կասկածինք թէ՝ իր այս ճիզուիտական ծրագրին մէջ յաջողի։

Մայր Աթոռը իր ատենին ստացած կըլլայ արդէն երեսփ. ժողովոյ դիւանին զրկած ընդարձակ տեղեկագիրը և լիովին լուսաբանուած այս նպատակաւոր տարաձայնութեանց մանրամասնութիւններուն նկատմամբ։

Ու կը հաւատանք, թէ Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետը տեղւոյս պաշտօնական մարմիններուն զրկած տեղեկագիրը կարդալէ և խնդիրներուն իրական ըլլալէ վերջ՝ մի անգամ ընդ միշտ պիտի համոզուի, թէ Մուշեղ եպիսկոպոսի վերագրուածը Գաֆթանեանի ու իր դաշնակիցներուն կողմէն՝ բացարձակ ստութիւն է, թէ անոնց հեղինակները ճշմարտութեան յաւիտենապէս երդուեալ թշնամիներն են և պարզ պրօվօկատօրներ...։

Մաղաք Գ. Պէրպէրեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԷԿ ԵՒ ԱՅՍՕՐ ՆՈՅՆՆ Է

Շատ եմ ցանկացել և շատ եմ ցանկանում մի-մի անգամ մեր առօրեայ իրական կեանքում կատարվող անմխիթար ակտերի մասին խօսել, բողոքել ու հրապարակել նրանց. սակայն շատ անգամ ծուլութիւնը, երբեմն էլ անտարբերութիւնը յաճախ ծառացել են իմ այդ իղձերի առաջ և արգելք հանդիսացել։

Անվերջ կրկնվող այդ բացասական ակտերը մարդու մէջ հարց են զարթեցնում, թէ մի՞թէ քանիերորդ դարումն էլ պէտք է իշխող լինեն այն կործանարար ֆակտորները, որոնցով ապագայ սերնդի մէջ գայթակղութիւն է միայն պատուաստվում։

Ամէն օր տեսնում ենք, որ երէկվայ բաղդախնդիր շանտաժիստը այսօր ջերմ իդէալիստ դարձած՝ հրապարակ է նետվել և իր քարոզներով իբր թէ գաղափար սերմանում ժողովրդի մէջ՝ առանց մի վայրկեան անգամ յետ նայելու դէպի իր տխուր անցեալը, առանց հաշւի առնելու իր անգրաւական ներկան, որոնք այնքան անհրաժեշտ են որևէ միսսիա հիմնաւորելու համար։

Ամէն օր տեսնում ու ապշում ենք, որ իր ժամերն ու վայրկեանները յաճախ խաբեբայութեան և վաշխառութեան մէջ անցկացնող երէկվայ աֆերիստը որևէ դիպուածով այսօր հասարակական պաշտօնի գլուխ անցած — գաղափարի և ճշմարտութեան անունով ի հարկէ—պատիւ է համարում իրան հրապարակով անուանարկել այն մարդկանց, որոնք իրանից բարձր լինելով՝ հէնց նոյն այդ ճարպիկ աֆերիստի անձնական հաշիւների և նրա անկարգ ու ապօրինի գործավարութեան զոհն են դառնում։

Մի՞թէ ուրեմն դեռ ակսիօմա չը պէտք է համարել այն ճշմարտութիւնը, որ մաքուր և ոչ յետին մտքերով արտայայտված իդէան պարարտ հող կը գտնի այն դէպքում միայն, երբ նրա հեղինակը իրանից իդէալի մարմնացում կը ներկայացնի։

Ես շեշտում եմ այստեղ, որ գաղափարի ներկայացուցիչները, բարի սերմ սերմանողները անհրաժեշտօրէն պէտք է լինեն նրանք, որոնք անբիծ են իրանց անցեալով, անբիծ իրանց ներկայով։

Մեծ մարդիկ իրանց մտքերն ու առաքելութիւնները տարածել և ընդհանրացրել են մեծ մասամբ իրանց մաքուր կեանքի օրինակով միայն։

Թւում է թէ՝ մենք իւրացրել և մարմնացրել ենք մեր մէջ այդ ձևով գործելու սկզբունքը, թւում է թէ՝ մենք սխեմատիքօրէն գնում ենք նրանց գծած ուղիով։ Ճի՞շդ է արդեօք։

Օրինակ՝ մեր ազգային-եկեղեցական գործերում այսօր շրջապատված ենք մեծ մասամբ ազգէտ իշխանաւորներով, ապիկար առաջնորդներով, որոնք ներկայումս հրապարակի տէրը լինելով՝ իրանց շուրջն են հաւաքել այն մարդկանց, որոնք ոչ թէ որևէ գաղափարի մասին թեթև հասկացողութիւն չունեն, այլ թէ նրանց բերնում կարծես խելք լեզու չը կայ՝ և ոչ էլ նրանց գլխում խելք կամ գիտութիւն, որպիսիք ընդունակ են միայն մեր իշխանաւորների ձեռքին կոյր գործիք դառնալու. Նրանց այդն՝ այդ և ոչը՝ ոչ ասելու, նրանց մանէկէնները լինելու։

Ամէն օր տեսնում ենք, որ երէկվայ տգէտը այսօր մի քանի պաշտօններ է ստանձնել և արագ քայլերով առաջ է վազում, որովհետև մեծ ընդունակութիւն ունի քծնելու, շնորհք ունի մեծաւորների քղանցքներ բարձրացնելու։

Եւ, այո, տեսնում ենք, որ այսպիսիք պաշտօններ և պարգևներ ձեռք բերելու ցանկութեամբ՝ աններելի միջոցներով իշխանաւորներին յարելու և կաշառելու կուլտը իրանց միակ պաշտամունքը շինելով, ամեն հնար գործ են դնում իրանց փառքին և տենչանքներին հասած լինելու համար։

Մեզանում կոչումները, պաշտօնները և պարգևները չեն տրվում ըստ ծառայութեան, ըստ հետևողականութեան և կամ ըստ արժանաւորութեան։ Կատարեալ անարխիա, կատարեալ անախրօնիզմ։

Կան պաշտօններ, որոնք եթէ ոչ իրաւաբանների, գոնէ դպրոցաւարտների, կրթված ու զարգացածների ձեռքին պէտք է լինէին անհրաժեշտօրէն, սակայն այսօր այդ պատասխանատու պաշտօնները գրաւել են այնպիսի մարդիկ, որոնք ուղիղ երկու տող անսխալ գրել չը գիտեն, որոնք կրթութիւն և զարգացում չունեն՝ և ոչ էլ ամենափոքր գաղափար կամ փորձառութիւն տիրող օրէնքի մասին։ Եւ ահա սրանք այսօր իբրև դատաւորներ՝ աջ ու ձախ պատիժ, կեանքի և մահու վճիռներ են արձակում՝ փառաւորապէս շահատակելով հասարակութեան նիւթականն ու բարոյականը։

Օրէնքը, կանոնադրութիւնը և պահանջը ցենզաւոր և պատրաստի մարդիկ է գործի հրաւիրում, սակայն այսօր նրանց հեռու են քշում և հրապարակը թողնում տգէտներին, մանէկէններին։

Հարցնում ես՝ ինչու։

Որովհետև կրթվածներն ու ցենզաւորները յաճախ զարգացմամբ բարձր կանգնած լինելով իրանց իշխանաւորից՝ կուրօրէն հպատակվելու, սկզբունքներ դաւաճանելու ձիրքը չունեն։ Որովհետև նրանք իրանց անհատական տեսակէտները, իրանց սեփական համոզմունքները և իրանց անխորտակելի դաւանանքներն ունեն, որոնք սակայն չեն յարգվում։

Մեզանում ոչ օրէնքը, ոչ երկարամեայ ծառայութիւնը և ոչ էլ տեղեկացիաները երբէք մաքուր անհատին չեն բարձրացնում, չեն օգնում։ Սողալ գիտես, ընդունակ ես կեղծելու և կամ պրոտեկցիա ունես՝ ուրեմն և իրաւունքը քոնն է. զուրկ ես այդ առանձնայատկութիւններից՝ պրծաւ, յաւիտեան մեռած ես, յաւիտեան արխիվ ընկած։

Որևէ փորձված, կրթված, զարգացած և տարիներով ծառայած մարդու առաջ օրէնքը այսօր պատրաստ է կանգնել, և վերև յիշված պայմանները ոչ մի կերպ չեն օժանդակում նրան՝ իր նպատակին հասնելու։ Բայց նոյն այդ օրէնքը յաճախ ոտնատակ է տրվում իշխանաւորներից սիրված այն մարդկանց խաթրու, որոնց թերևս տրակտիրների զարդ միայն կարելի էր համարել։

Որևէ մարդու, պաշտօնեայի և կամ հոգևորականի գողութեան և անբարոյականութեան մասին իրաւունք չունես ձայն հանելու. որովհետև կարծես թէ հէնց բնական է համարվում այդ. իսկ եթէ կը յանդգնես մերկացնել, ըմբոստ կը հռչակվես, ինքդ էլ կը տուժես փառաւորապէս։

Ահա այս է մեր իրականութիւնը։

Եւ այսպէս անվերջ շղթաներով անկարգ և անկանոն, անխիղճ և յանցաւոր գործավարութիւններ։

Ապա ուրեմն ի՞նչպէս չասենք, որ երէկն ու այսօրը նոյնն է։

Բևեռ

ՑԱՒԱԼԻ Է, ԱՅՈ՛

«Մշակի» № 136-ում Մ. Դերձակեանը ըստ էութեան մի շատ կարևոր հարց է առաջադրել մեր հայ ժողովրդի առաջ՝ «Ցաւալի դրութիւն» վերնագրի տակ։

Այդ հարցը զանազան շրջաններում գրեթէ միշտ շօշափվել է, սակայն հրապարակ չէ դրված, կարծեմ, և ոչ մի գրողի կամ հրապարակախօսի կողմից։ Մասնակի երևոյթներ նկարագրվել են այս և այն թերթերում, սակայն կոնկրէտ կերպով այդ հարցը հրապարակ չէ հանված։

Այժմ, երբ այդ մեծ ու կարևոր խնդիրը դրված է հրապարակի վրա «Մշակի» միջոցով, պիտի պարզվեն դրա իսկական պատճառները և բուժիչ միջոցները։

Մեր համեստ կարծիքով, Մ. Դերձակեանը բոլորովին միակողմանի կերպով է դատում նրա պատճառների վերաբերմամբ, գլխաւորապէս ծանրանալով յիշած $99^0/_0$ ուսանողութեան վրա, որպէս թէ նրա միջոցով Փրանսիայից են մտել մեր հայերիս մէջ այդ ցաւալի երևոյթները։

Կարող է որոշ տոկոս դրանից էլ լինի ցաւալի երևոյթների մէջ, սակայն բոլորը վերագրել նրան՝ դա մի քիչ ծանր մեղադրանք է։ Ցաւալի դրութեան իսկական, բուն կորիզը պիտի փնտռել քաղաքական և տնտեսական այն միջնավայրում, ուրտեղ ապրում է հայ ժողովուրդը։

Որպէս առաջին պատճառ ցաւալի դրութեան և իբրև նրա ֆակտօրներից ամենամեծը պիտի մատնանիշ անել տնտեսական ծանր դրութիւնը, որը գիւղի և աւանների երիտասարդութիւնը քշում է կենտրոնական մեծ քաղաքները, ուրտեղ ամեն բան տեսնում և սովորում են և իրանք էլ խըրվում տղմի մէջ։ Սրա մասին յետոյ։

Երկրորդ պատճառն է՝ հայ հոգեբանութեան հասկացողութեան սնանկութիւնը, որը կամաց-կամաց իր հոտը այլևայլ գաղթների ճանկն է ձգում, առանց ըմբռնելու մեր եկեղեցու լայն ու վսեմ ժողովրդական ոգին, որի օրէնքները կասեցնող են ամեն մի վատ սովորութիւն ու երևոյթ, եթէ այդպիսին մուտք է գործել նրա որդոց ընտանիքների մէջ։

Երրորդ պատճառը՝ վերջին երկու տասնեակ տարիների մէջ անցած ու դարձած այն երևոյթներն են, որոնցով միայն զբաղված էր մեր փոքրաթիւ ինտելիգենտ երիտասարդութիւնը, որը իր յախուռն ու խենթագարի պէս տարված գաղափարով՝ սկսեց այնպիսի եղանակով տանել մեր մատաղ սերնդի կրթութիւնը, առանց ուշք դարձնելու հայ ժողովրդի տնտեսական ու բարոյական կողմին, որը լինելով մակերևութային և միակողմանի, այսօր առաջ են եկել ցաւալի երևոյթները…

1885—6 թուերից սկսած մինչև 1892 թ. այսօրվայ մատնանշված ցաւալի երևոյթների $^1/_{1000}$-երորդականը հազիւ էր նկատվում. օրինակ՝ ամուսնալուծական, ամուսնասպանման, ծնողասպանման, եղբայրասպանման և կամ ամուսինը ամուսնուն դաւաճանելու երևոյթները. նրանք էլ իրանց տղմի մէջ խեղդվում էին՝ կրօնական և կամ հասարակական դատավարական եղանակով, որը յատուկ էր ամեն մի տեղի համայնքին և այլն։

Երբ առաջին անգամ ես ոտք դրի Գանձակ, դա 1886 թիւն էր. և մտնելով պաշտօն, որպէս ծառայող, այդտեղ հանդիպեցի Արամ Տէր-Մկրտչեանին և Գրիգոր Ղորղանեանին, որոնք հեռագրատան պաշտօնեաներ էին։ Ես դրանց միջոցով ծանօթացայ և ճանաչեցի բժ. Թէմուրովին, Պաւել Կոստ. Մելիքովին, Նիկ. Նազարէչ Մելիքովին և Թումանեան քահանային, որոնք իրանց հասարակական դիրքով և պաշտօնով յարգանք և պատկառանք էին վայելում թէ Գանձակի և թէ գաւառի բնակչութեան կողմից, որովհետև Թէմուրովը նահանգական բժիշկ էր և գրեթէ միշտ գաւառները պտտում էր, Պ. Կ. Մելիքովը տեղական գիմնազիայի դիրեկտօրն էր (եթէ չեմ սխալվում), Նիկ. Նազ. Մելիքովը հաշտարար դատաւոր և Թումանեան քահանան ս. Յովհաննէս աւագ եկեղեցու աւագ քահանան։

Ահա այդ անձնաւորութիւնները, իրանց դիրքին ու պաշտօններին վայել, իրանց մօտ ընկերներով, բարեկամական և ընկերական ուխտով կապվել և բարոյական պարտականութեամբ աչալուրջ կերպով հսկում էին և անմիջապէս երևոյթի մօտ վազելով և կամ կանչելով իրանց մօտ՝ միջամտում այդպիսիների գործին և բարոյապէս կամ մի թեթև պատժով մէջտեղից վերացնում այն իսկ պատճառը, որը առիթ է ծառայել այն անախորժ գործին…

1889 թւին տեղափոխվելով Թիֆլիս՝ ինձ թւաց, թէ փոքրիկ գետակից մի մեծ ծով ընկայ։ Եւ իրաւ այդպէս էլ էր։ Շփվեցի զանազան մարդկանց հետ, ծանօթացայ շատ ու շատ ընտանիքների, շնորհիւ հօրեղբօրս ընտանիքի ու բարեկամների. այստեղ էլ նկատեցի, համեմատաբար Գանձակի պէս մի փոքրաթիւ ազգաբնակութիւն ունեցող ժողովրդի, բարոյական ու նահապետական նիստ ու կաց անարատ հողի վրա՝ հայ ժողովրդի խաւերում (մի կողմն եմ թողնում ճարպակալած դասակարգը, որի նիստ ու կացը այլ էր և այժմ աւելի է առաջ գնացել)։

1893 թւին տեղափոխվեցի Բագու, այդ հազարերանգ փետրաւոր քաղաքը, իր ոսկու հորթերով, որը մագնիսական ույժով քաշում էր դէպի իրան գաւառի առողջ ու անարատ տարրը—տարր՝ որը տնտեսապէս նեղ վիճակումն էր և է,—քաղաքներում տեղ ու դարման ճարելու՝ իր վիճակը թեթևացնելու…

Բագւում գտայ իսկական ժողովրդի ցաւերով տանջվող լաւ կազմակերպված ինտելիգենցիա, որը Բագուն, Բալախանին ու Սև-Քաղաքը բաժանած իր շրջանում՝ գիշեր ու ցերեկ սկսել էր աշխատաւոր դասակարգի մտաւոր և բարոյական մակարդակը բարձրացնել։

Ամեն մի ինտելիգենտ ունէր իր մարդ-երեխայ աշակերտները, թւով 25—50. այդ ինտելիգենտների սրբազան պարտականութիւնն էր բարոյական դասախօսութիւններ կարդալ այդ մարդ-աշակերտներին, հետևել նրանց կենցաղավարութեան եղանակին և, զգուշացնելով նրանց զանազան վատ ճանապարհներից, միշտ միտքը վառ պահել դէպի այն ընտանիքն ու որդիքը, որ իրանց ետևում թողել և եկել են փող աշխատելու…

Գլխաւոր միջոցը, որ գործադրում էին իրանց մարդ-աշակերտների համար, այն էր, որ ռուսական և հայկական յայտնի հեղինակների աշխատութիւններից, ամեն մէկին իր մտաւոր հասկացողութեան աստիճանով, բաժանում էին ու պարտաւորեցնում, որ կարդան. յաջորդ անգամ՝ այս-ինչը ու կամ այն-ինչը պիտի գրքի բովանդակութիւնը պատմի և իր կարծիքները արտայայտի գրքի հերոսների նկատմամբ։

Սա մի լաւ ու ազնիւ միջոց էր, որ յետ էր կասեցնում երիտասարդութիւնը զանազան վատ տեղերից, իր ժամանակը նուիրում մտաւորին և բարոյականին, չունենալով ազատ ժամանակ, որ յաճախի գինետներ, հիւրանոցներ ու զանազան տեղերի հետ և՛ անառականոցներ, որտեղից մարդիկ ստանում են զանազան վարակիչ հիւանդութիւններ ու ցաւեր, որոնք հիւծում, մաշում են և վերջն էլ այդ տկարացած երիտասարդների միջոցով գնում-հասնում են հայ անարատ ու նահապետական գիւղերը և ահագին ընտանիքներ վարակում…

Սակայն 1893—4 թւից յետոյ սկսվում է մի բոլորովին այլ պատկեր… Չար մարդկանց լեզուներով ինտելիգենցիան նկատվում է կառավարութեան կողմից կասկածաւոր. երբ հակակառավարչական մարդիկ հալածվում, բանտարկվում և զանազան կողմեր են քշվում։

Որբանում են հազարներով երիտասարդներ, որոնք ստանում էին իրանց կամաւոր ուսուցիչներից թէ բարոյական խրատներ և թէ մտաւոր սնունդ… Այո, ցամաքում է այն աղբիւրը, որտեղից ստանում էին բարոյախօսական պատուէրներ… յարգանք ու պատիւ դէպի ծնողները և հայկական ընտանեկան սրբութիւնը…

Կարծեք մի տարերային ույժ էր, որ եկաւ ու ցամաքեցրեց ամեն բան, ինչ որ հայկական էր. և միջավայրը մնաց գործող ինտելիգենցիայից ամայի… Երիտասարդութիւնը—բանւոր, արհեստաւոր, գործակատար և այլն—սկսեց անջատվել միմեանցից. այլ ևս չը կար այն օղակը, որ միացնում էր դրանց. և սկսեցին խրվել զանազան տղմի մէջ, որը յորձանք տալով՝ ահագին թւով եկել-լցվել էր Կովկասի զանազան քաղաքները…

Դրանք զանազան ցեղերի ու ազգերի տականքներն էին, որոնցից ամեն մէկը մի դեղին անցագիր ծոցում, իսկ օտար պետութիւնների երկրներից որպէս բաղդ փնտրողներ պատուաւոր անցագրով վազում էր ասիական տաք ու հիւրասէր երկրները իր սառած մարմինը տաքացնելու և հաց ճարելու…

Բանւորը, հաշւապահը, արհեստաւորը, գործակատարը, ամուսնացած և կամ ամուրի, զրկվելով իրանց դաստիարակ-բարոյախօսներից, սկսեցին տարվել զանազան հրապուրանքներով և խրվել տղմի մէջ և այլ ևս երկար տարիներ չը վերադառնալ իրանց ընտանիքների ծոցը, որովհետև ամբողջ վաստակածի հետ հալվել էր նաև իրանց ամենաթանկագին առողջութիւնը։ Տուն վերադառնալու ցանկութիւնը, սկսեց կամաց-կամաց մեռնել և կամ թուլանալ նրանց մէջ։ Եթէ գնում էլ էին, նրանց ետևի փեշերից քարշ էին ընկնում—բացի գիւղի հարազատ զաւակներից ու կնոջից, որոնց աչքերը իրանց հարազատի ճանապարհը մաշեց—անհարազատ կինն ու զաւակները, որոնց աշխարհ գալու պատճառը ինքն է, որովհետև այդ այլազգի կնոջ հետ ապրել է 5-6 տարի։

Ասացէք խնդրեմ, ինչ պիտի անի այդպիսիների հարազատ ամուսինը, որը ամուսնու սիրով վառված՝ նահապետական տան պատիւը բարձր պահելով՝ սպասել է. և իր զաւակներին կերակրել, թէ ահա այսօր կամ վաղը կը գայ նա։ Բայց նա հազիւ 5—6 տարուց յետոյ է գալիս, այն էլ այդպէս խայտառակ կերպով։ Միթէ եկեղեցին օրէնք չունի դրա համար։ Եւ եթէ կայ, ինչպէս է վերաբերվում հոգևոր հովիւը այդ խայտառակ երևոյթին։ Նա կամ չը տեսնելն է տալիս այդ բոլորը և կամ ուղարկում է մարմնաւոր իշխանութեան դուռը, և ամեն բան վերջացաւ…

Ասացէք խնդրեմ, այստեղ այլ ևս հաւատ և կամ յարգանք կը մնայ տածել դէպի եկեղեցին և նրա պաշտօնեան։ Ո՛չ մի ժամանակ։

Անարատ և անմեղ բողոքն ու ձայնը մնում է անլսելի, ընտանեկան պատիւն ու սրբութիւնը արատաւորված իր շրջապատում…

Պատճառը ինչ էր այս ցաւալի երևոյթի, եթէ ոչ տնտեսականը։

Եթէ այդպիսիները գիւղում և կամ աւաններում կարողանային կառավարվել և կարողանային այնքան վաստակ ունենալ, որ վճարէին և այն զանազան տուրքերը, որ դրվում են նրանց վրա թէ կառավարութիւնից և թէ համայնքից, նրանք երբէք չէին հեռանայ իրանց ընտանիքներից և երբէք չէին առաջ գայ այդ ցաւալի երևոյթները…

Առաջներում մեր փոքրաթիւ ինտելիգենցիան չէր խորշում իրանից դիրքով ու կրթութեամբ ցածր դասակարգից։

Ընդհակառակը, նա ինքն էր մօտենում նրան իդէալական ձգտումով և ուղղութիւն տալիս նրա ընկերական և ընտանեկան գործերին։ Իսկ այսօրվայ, կրկնակի և եռապատիկ աւելի եղած ինտելիգենցիան (բացառութիւնները յարգելի են), մոռացած ամեն մի բարոյական պարտք՝ դէպի իր ազգն և նրա պակասութիւնները, իր կարիէրայի պոչին կպած՝ ոչ մի բան ճանաչել չէ ցանկանում և եղած բացառութիւն կազմողների վրա էլ ծիծաղում է և «ազգասէր» ածականը կպցնում՝ որպէս ծաղրական մի տիտղոս։

Մեր կարծիքով՝ բանական մարդ կոչված արարածը միայն այն ժամանակ իր կոչման բարձրութեան վրա կը լինի, երբ նա ինքն իրան լաւ ճանաչի ու ճանաչի նրանց և յարգի, պատւի, որոնք եղել են նրա աշխարհ գալուն պատճառ. յարգի այն սրբութիւնները, որոնք պաշտվել են իր նախորդներից և որոնց տեղ դեռ նորերը չեն դրվել ու դեռ գոյութիւն չունեն։ Երբ մի բան ուզում են վերցնել, աւելի շուտ՝ ույժով պոկել մեր կրծքից ու գանգից, թող դատարկ չը թողնեն նրա տեղը, այլ դնեն մի ուրիշ աւելի լաւն ու գեղեցիկը այն ժամանակ մենք ոչինչ չենք ունենայ ասելու այդպիսիներին։

Սակայն երբ նրանք խլում ու դէն են ձգում այն միակ յուսոյ և հաւատի կտորը, որին մարդիկ պաշտում և հաւատում են, և տեղը թողնում դատարկ, դա մարդ կոչված արարածին մղում, տանում է կորուստ իր զազանացած ամբողջ դատարկ հոգով։

Եթէ այդպիսի մտքերը արտայայտէին իրանց մէջ, այնքան էլ ցաւալի չէր լինի, բայց վերցնում և լրագրութեան մէջ մի ահագին նիւթ են շինում, իրանց կուսակցական և կամ թայֆայական, նոյնիսկ անձնական շահի տեսակէտից, և դնում կիսակիրթ կամ բոլորովին ռամիկ ժողովրդի և ուսման հետևող սերունդի առաջ. այդ հանգամանքն ահագին մտքերի շփոթութիւն է առաջ բերում և կամաց կամաց սառեցնում ամեն բանից.. Ահա այսպէս, մեր մէջ ամեն բան թուլանում, այլանդակվում և դառնում է ցաւալի դրութիւն…

Գանք այժմ Դերձակեանի յօդուածի այն կէտին, որ ասում է. «Ո՞րտեղ կարելի է տեսնել աւելի շատ ամուսնաթողներ, ամենից շատ անպսակ կենակցութիւններ, ամենից շատ սիրահարութեան զոհեր։ Չէ՞ որ հէնց այդ «կրթվածների» բարձր հասարակութեան շրջաններում»։

Միանգամայն համաձայն ենք Դերձակեանի հետ, որ այդ դասակարգում աւելին կայ, քան մի այլ դասակարգում. սակայն բացատրութիւնը, չարիքի իսկական արմատը, մեր կարծիքով, այն չէ, ինչով բացատրում է պարոնը. աւելի շուտ ուրիշ տեղ պիտի փնտռել դրանց այդտեղ հասցնող պատճառը։

Մեր կարծիքով, պիտի վերցնել նրանց տնտեսական և նիւթական փարթամ վիճակը, նրանց տներում ծառայող լաքէյներին, ծծմայրերին, բոննաներին, աղախիններին, որոնք տասնեակ հազար վերստեր եկել են փող վաստակելու հեռու Կովկասում, որը Գերմանիայից, որը Փրանսիայից, որը Իտալիայից, որը Աւստրիայից ու Անգլիայից և հիւսիսային հեռու կամ մօտիկ քաղաքներից։ Դրանցից ամեն մէկը հաշվում է այն տան գրեթէ իսկական անդամը, որոնց, դիտմամբ, այդ աշխարհիս երջանիկները վարձում են ոչ իբրև սոսկ ծառայ, այլ այդ անուան տակ ժամանակաւոր ընկերներ եւ զբաղեցնողներ իրանց 14—21 տարեկան որդոց՝ իբր զերծ պահելու նրանց իրանց համար զանազան անպատշաճ տեղերից։

Այդպիսի յարմարութիւնները իրանց որդոցը տալուց զատ՝ չեն խնայում և տալիս են նրանց ամսական 30—100 րուբլի, թերևս էլ աւելի, որպէս գրպանի փող, արտակարգ ծախսերի համար. և ինչ էք կարծում, ուր գնում են այդ փողերը. պարզ է, որ դրանից յետոյ պատկերը կատարեալ է լինում… Իսկ ինչ են շինում այդ երիտասարդների ծնողները, երբ իրանց որդիքը կառքերով և այլ յարմարութիւններով պտտում են քաղաքների զանազան խուլ անկիւններում… Նրանք էլ կամ միասին և կամ զատ-զատ իրանց հաճոյքի ետևից են շրջում զանազան տեղերում և ուշ գիշերվայ ժամը 2—3-ին վերադառնում տուն՝ առանց նայելու և ստուգելու, թէ իրանց որդին տանը իր անկողնո՞ւմն է թէ ոչ։

Եթէ Գարագաշը ասում է, որ «ոչ էլ կրթված են, ոչ կիսակիրթ և ոչ տգէտ»—միանգամայն իրաւացի է։ Որովհետև դրանք զանազան դիրքի և աստիճանի հասել են բաղդի քմահաճ բերմամբ. աստիճաններն ու դիպլօմները դեղին ոսկին է տուել այդպիսիներին (բացառութիւնները կրկին յարգելի են), և ոչ թէ ուրիշ բան… Այդպիսիները քանի՛ գրօշ արժէն այն ազգի համար, որի, դժբաղդաբար, անդամը կոչվելու պատիւն ունեն…

Երբ մենք կունենանք ազնիւ, իսկական հոգով կրթված հայ մայրեր, որոնք իրանց պտուղներին իրանք իրանց կրծքերով կը կերակրեն, և հայ բարեկիրթ հայրեր, որոնց համար թանգ կը լինի հայ անունը, այն ժամանակ միայն մենք կունենանք իս-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄՆԱՑՈՂՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Ի՞նչ կը լինէր մարդկանց կեանքը առանց խորունկ յոյզերի ու ցնցող կրքերի, ինչի՞ կը նմանէր գոյութիւնը միալար կենցաղի՝ առանց ուրախութեան ու վշտի բազմաշերտ ապրումների։

Յոյզերն են քաղցրութիւն տալիս մեր գոյութեանը, նրանցով է գունաւորվում մեր նպատակը, նրանք են առաջնորդում մեր կենաց նաւը նախագծված ուղղութեամբ և ազատում են մեզ պատահմունքին խաղալիք լինելուց։ Առօրեայ հոգսերի ու անակընկալների մանրութիւնների մէջ միշտ նրանք են կանգունութիւն տալիս մեր կամքին։ Անիմաստ ու անհեթեթ է կեանքը առանց ձգտման ու յոյզերի, օրերի անբովանդակ զանգուած, յիմարական դրութեան խտացումն է այդ, յատուկ միայն հիւանդ անհատներին. առողջ մարդը պէտք է ունենայ իր անձի գոյութեան մի նպատակ, դէպի որը պիտի ձգտի հասնել։ Թող այդ նպատակը լինի մի խելառ ցանկութիւն, աներագործելի երազանք կամ հեռաւոր ապագայի շատ ընդարձակ ծրագիր. թող անհեթեթ լինի ձգտման օբիեկտը իր էութեամբ, բայց նա իր գոյութեամբ բովանդակութիւն է տալիս անհատի կեանքին, գրաւչութեան լուսապսակով է ծածկում նրա դէմքը, անուշիկ յոյսերով լի օրեր է պարգևում, ձգտել, աշխատել, լարվել ու պայքարել է սովորեցնում։ Եւ կամ թող այդ նպատակը լինի մի չնչին բան, դիւրին իրագործելի միտք, մօտիկ սպասելիք, ասենք՝ որդու, դստեր կամ եղբօր դաստիարակելը, բաղդաւորեցնելը և կամ թէ մի այլ գործ վերջացնելը. սրանք էլ նպատակներ են, որոնց հասնելու համար մարդ պէտք է ձգտման ընդունակ լինի, հայեացքը հեռուները դարձնել կարողանայ։

Թէ խոշոր և թէ այս մանր նպատակներին ձգողական ույժ և գունաւորում տալիս են մարդկային յոյզերն ու կրքերը. նրանք սիրելի են դարձնում ձգտումը, քաղցրացնում են դրա պատճառած դառնութիւնները։

Սովորական հասարակական առողջ էակն է այսպիսի մարդը, բարեպէս և գուրեկան. սրանցից տարբերվում են նրանք, որոնք նպատակներից զուրկ են և յոյզերի ու կրքերի մասին գաղափար չունեն։ Հների մի ոճը այլ կերպ դասաւորելով կարելի է ասել, որ «վայրի արջից էլ վտանգաւոր են նրանք, որոնք ապագայի կազմակերպութեամբ չեն հետաքրքրվում և անծանօթ են յոյզերի բռնկմանը»։

Ուրեմն առողջ անհատի ձգտումից և դրա իրագործման եղանակից անբաժան են յոյզերը և կրքերը։ Ամենից զօրեղը բոլոր յոյզերից ու կրքերից՝ ստեղծագործութիւնն է։ Ստեղծագործման միջոցին է մարդս ամբողջապէս բուռն ցանկութիւն դառնում և այդպէս իր նպատակի իրագործմանը դիմում։ Ստեղծագործութիւնը երկունքով է լինում և իր գոյացումի ցաւերն ունի։ Բայց կան տարբեր տեսակի ստեղծագործութիւններ. մտածողին տանջող մտորմանց արտայայտութիւնն է ստեղծագործումը, որ երբեմն բանաստեղծութիւն է կոչվում։

Բոլորիս յայտնի է այն պատմութիւնը, թէ ինչպէս է Խաչատուր Աբովեանը իր «Վէրք Հայաստանին» շարադրել. ամբողջ գլուխներ նա գրել է յոյզի հզօր ազդեցութեան տակ, օր ու գիշեր, առանց հանգստանալու. այդ մասին յիշատակութիւն կայ մեր առաջին աշխարհիկ վէպի առաջաբանում։ Գիտենք, թէ ինչպէս Վիկտոր Հիւգօն լերան բարձունքից իջնելիս անգիր է արել յետագայում գրի առած իր զմայլելի երկերը։ Գիտենք, թէ ինչպէս Գամառ-Քաթիպան գրել է իր ոտանաւորները և Ահարոնեանը իր մանր պատմուածքները։ Լսել ենք, թէ ինչպէս է Այվազովսկին ստեղծել իր «Իններորդ ալիքը» և միւս կատարելութիւնները։ Ստեղծագործման մեծագոյն կիրքն է եղել սրանց բոլորի գրիչը շարժողը. հզօր յոյզն էր նրանց հոգիները մտրակողը, խորունկ բռնկումն էր նրանց էութիւնը հրդեհել և այս հիասքանչ արգասիքները արտադրել։ Սրանք մտքի ստեղծագործութեան հոյակապ կերտուածներ են, որոնք անմահ կը մնան կենդանի մտածողների մէջ։ Բայց կայ և աւելի մեծը և դժուարինը, ամուսնութեան ստեղծագործումը, մանկիկի ծնունդը, որի իրագործման մէջ մասն ունեն երկու էակներ իրանց և՛ մտքով, և՛ սրտով, և՛ մարմնով։ Այս ստեղծագործումն է ոչ թէ բառերի աջող դասաւորման կամ յաւիտենական ճշմարտութեան մի բիւրեղացման և կամ պլաստիկ արուեստների մէջ երևակայութեան մի թռիչքի, այլ ստեղծագործումն է կենդանի հրաշակերտի, աստուածանման մարդու, որ արուեստների գերարուեստն է, պսակը բոլոր յօրինուածքների։ Ստեղծագործութիւններից մեծագոյնն է այս, յոյզերի ու կրքերի բարդ միախառնման և յստակ արտայայտման բարձր աստիճանը, երկարատև և ցնցող բռնկումն, որ մօր մարմնից մի մասն է կտրում և որպէս կատարելատիպ արուեստ՝ մարդկութեանն է պարգևում մի նոր էակ՝ նրա հետ մէկտեղ ապրելու և միասին ապագան գունաւորելու։

⁂

Տեսե՞լ էք ծննդկանի երկունքը, զգացե՞լ էք տառապանքը յղի կնոջ ցաւերի ձեր մարմնի մէջ, նայե՞լ էք նրա դէմքին՝ մարդկանց տառապանքի այս ճշմարիտ ջերմաչափ-հայելուն։

Վերջին օրերս ես տեսայ ծննդկանի երկունքը, հսկեցի ազգակից մի կնոջ ազատվելուն, կարդացի երկունքի ընթացքի այբուբենը, որ դիմագծերի փոփոխութեամբ և ձայնի ելևէջներով է արտայայտվում, և այս, երբ մի նոր գանձ, գումարվեց իմ մտածողութեանը, լայնացրեց իմ հասկացողութիւնները և յստակօրէն ներկայացրեց ինձ իմ մտորումներս։ Ես ըմբռնեցի գերագոյն ստեղծագործութիւնը և դրա հետ կապված յաւիտենական մի նոր ճշմարտութիւն. սրա գիտակցութեամբ է, որ ապրում է մարդկութիւնը և շնչում է ցեղերի պատմութիւնը։

Այս յաւիտենական ճշմարտութեան մակական ոգով կրթված և դաստիարակված գործիչներ մեր ամեն մի հիմնարկութիւններում և զանազան ասպարէզներում։ Եւ ցաւալի երևոյթները կամաց-կամաց կը վերանան...

Մ. Թայիրեանց

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Բազմակնութիւնը Ղարաբաղում

Շուշի, 18 յուլիսի

«Մշակի» № 143-ում կարդում ենք հետևեալ բնորոշ տեղեկութիւնը. «Ստաւրօպօլի դատական պալատում դռնփակ քննըվում էր 44 տարեկան գեղջուկ Վետչինօվի գործը։ Նա մեղադրվում էր երկու կին ունենալու համար։ Պալատը դատապարտեց Վետչինօվին կէս տարի եկեղեցական ապաշխարութեան և 1 տարի 4 ամիս բանտարկութեան ուղղիչ բաժանմունքում, զրկելով բոլոր իրաւունքներից»։

Փառք Աստուծոյ, որ գտնվեց օրէնք, որի հիմքով պալատը դատապարտում է երկու կին պահող մարդուն։ Քրիստոնէական եկեղեցին սկզբից մարդու համար որոշած է մի կին, այնպէս և կնոջ համար մի մարդ։

Ունենք հարևան ազգեր, որոնց մէջ ոչ միայն զարգացած է բազմակնութիւնը, այլ և ամուսնական խնդիրը հասած է ծայրայեղ այլանդակութեան։ Այդ ազգերը իրաւունք ունեն այնքան կին պահել, որքան ներում են նրա ֆիզիքական և նիւթական միջոցները։ Ոչ մի արգելք, ոչ մի պատճառաբանված հրաման չը կայ նրանց կրօնական ուղեցոյց-հրահանգների մէջ։

Մեր հարևանների այդ բազմակնութիւնը, այլ և զանազան նման մոլի սխտեր մուտք են գործել և հայերիս մէջ։

Մեր մէջ կան մարդիկ, որոնք սիրում են երկու կին պահել, որպէս թէ զաւակներ ունենալու պատճառով։

Դիզակ ծայրագաւառում զարգացած է բազմակնութիւնը։ Մարդը ամուսնանում է եկեղեցական կարգով, տարիների շրջանում չէ ունենում զաւակ և անպսակ բերում է երկրորդ կին։

Մինչ Դիզակում զարգացած է բազմակնութիւնը, փոքրիկ աղջիկներին պսակելը, նոյն բաները խստիւ հալածված են միւս ծայրագաւառներում՝ Խաչէնում և Ջրաբերդում, որովհետև առաջինը սեղմված է օտար ազգերով, որոնց մէջ զարգացած է բազմակնութիւնը, իսկ միւս տեղերում հեռու են նրանցից և այդպիսի բաները նրանց աչքին խիստ խորթ են երևում։

Որ գիւղերում կան յարգելի պատճառներ երկրորդ կին պահելու, այդ մասին չէ մեր խօսքը։ Օրինակ՝ մէկի կինը անդամալոյծ պառկած է, կամ կաթուածահար է եղած և տներում չը կան ուրիշ գործող անհատներ, հաց թխող, կար և լուացք անող և կերակուր եփող, այդ դէպքում երկրորդ կին բերելու անհրաժեշտութիւնը անխուսափելի է։ Սակայն անբացատրելի է մնում այն մարդկանց արարքները, որոնք զաւակ ունենալու պատճառով բերում են երկրորդ կին։

Պետ

Մոծակը Ղազախի գաւառում

Ուզունթալա (Ղազախ), 25 յուլիսի

Աղստաֆա գետի հովտում այս տարի նորից բրինձ են ցանել, որի ճահիճներից գոյացած մոծակը լցվել է գիւղերը։

Ութ տարի սրանից առաջ ես, երբ այս օրի էինք, շատ գիւղեր շատ զոհեր տուին. միայն Ուզունթալայից մեռան 120 հոգի։ Այն ժամանակի գաւառապետ Արնօլդը արգելեց բրնձի ցանքը, և մոծակը վերջացաւ։

Այս տարի գաւառապետ Րէուտի խնդիրը՝ բրնձի ցանքն արգելելու համար, Գանձակի նահանգապետը մերժել է։

Մի քանի մարդու օգտի պատճառով տուժում է ամբողջ ազգաբնակութիւնը, և մի հնար չենք իմանում բրնձի ցանքն արգելելու համար։ Կարելի է դիմել Փոխարքային, բայց արդեօք կը լինի մի օրէնք, մի պատճառաբանութիւն, որպէսզի մեր խնդիրներն անհետևանք չը մնան, չը գիտենք. այդ մասին շնորհապարտ կը լինէինք, եթէ բարի մարդիկ օգնէին մեզ իրանց խորհրդով։

Ջաք. ք. Ապրեսեան

Բոստանների վնասված մի շրջան

Հին-Նախիջևան, 25 յուլիսի

Տարօրինակ քամիների ազդեցութեան ներքոյ ենք գտնվում. ամեն ինչ պատած է փոշու ու գոլորշու մառախուղով։ Ահա 15 օր է՝ շարունակ փչում են առաւօտ-երեկոյ ցուրտ, իսկ միջօրէի պահուն կիզիչ քամիներ. այդ քամիները հարաւ-արևելքից կամ պարզ ասած՝ հարևան Պարսկաստանի քարքարոտ, բուսականութիւնից զուրկ «Քամքու» (կամք քո է) և ուրիշ լեռներից ու կիզիչ աւազոտ անապատներից սլանալով դէպի Հին Նախիջևանի սահմանակից գաւառը՝ ամեն ինչ խեղդում են փոշու թանձր մառախուղի մէջ։ Ինչ վերաբերում է միջօրէի տաք քամիներին, դրանք երբեմն-երբեմն վրդովելով օրվայ այդ ժամանակվայ մեռելային այրող խաղաղութիւնը, ամեն ինչ չորացնում են, առաջ բերելով ձմերուկի ու սեխի բոստանների համար «շալխտա», իսկ խաղողի այգիների համար «չռռ» կոչված հիւանդութիւնները։

Շախտան արդէն ոչնչացրել է Ալիաբաթ, Շիխմահմուդ ու այլ գիւղերի սեխի բօստանները. բօստան ցանողները ձեռները ծոցին, արտասուքը աչքին, քանդելով բօստանի պահպանութեան համար ժամանակաւոր շինած փայտէ «չարդախը»՝ թողել հեռացել են, ողջ տարվայ արդիւնքի կորուստը ողբալով։

Իսկ երբ բացակայում են քամիները, մի անսովոր տաք փոշուց, աւազներից ու գոլորշու խառնուրդից կազմված մթնոլորտ պատում է սար ու դաշտ, արտ ու արօտ, գիւղ ու քաղաք, մանաւանդ կէսօրին. մի կէս վերստ հեռաւորութեան վրա այլ ևս ոչինչ չէ նշմարվում փոշիների անթափանցիկ ամպերի միջից։ Այդօրինակ եղանակները լաւ բան չեն գուշակում չարքաշ շինականի համար, որ սրտատրոփ սպասում է բամբակի ու այլ ցանքերի աջող բերքին...

Չը նայած որ ցորենի բերքը այս տարի լաւ է, բայց հունձը ընկած օրից գիւղացին սկսել է ուտել բերքը, քանի որ հին բերքը վաղուց էր սպառվել, և նա փողով կամ պարտքով էր գնում ամբողջ ձմեռը իր ուտելու հացը...

Ա. Տէր-Ստեփանեան

Հայերը Աբասթումանում

Աբասթուման, 20 յուլիսի

Աբասթումանի մշտաբնակ հայերը այստեղ շատ աննշան են. հարուստները 2—3 հատ են, մնացածը համարեա թէ կառապաններ ու մանրավաճառներ։

Հայերը ունեն մի փոքրիկ, բայց գեղեցիկ եկեղեցի, որը գտնվում է քաղաքի ծայրում, կենտրօնից շատ հեռու։ Հեռու ապրողների համար շատ մեծ դժուարութիւն է լինում եկեղեցի յաճախել, ու միշտ էլ եկեղեցին դատարկ է լինում։

Աբասթումանը դեռ ևս չունի մշտական քահանայ. մի ամիս առաջ ընտրել են խմբապետ Տօնականեանին քահանայացու, որը ծխական դպրոցն է աւարտած։ Թղթերը ուղարկված են կօնսիստոր, բայց ոչ մի պատասխան չը կայ։

Ըստ իս՝ Աբասթումանը, որպէս յայտնի կուրօրտ և առաջադիմելու շանսեր ունեցող, պէտք էր ունենար առնուազը միջնակարգ կրթութեամբ քահանայ-քարոզիչ, զարգացած մի մարդ, որ կարողանար տեղական ույժերի հետ դպրոց բանալ, Բարեգ. Ընկ. ճիւղը զարգացնել, գրադարանը ճոխացնել գրքերով ու թերթերով, և այլն։

Հայերի ներքին կեանքի ու ձգտումների հետ դեռ ևս ծանօթ չեմ։ Երէցփոխը երիտասարդ գործունեայ մի պարոն է։

Նորեկ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Թիֆլիսի քաղ. վարչութիւնը դիմել է անդրկովկասեան երկաթուղիների վարչութեանը, խնդրելով տեղեկացնել թէ ինչ դրութեան մէջ է գտնվում ապրանքների կայարանը Նաւթլուղ տեղափոխելու ծրագիրը և պարզել, թէ որտեղ պէտք է շինվի «Նաւթլուղ» կայարանը։ Այդ տեղեկութիւնները ստանալուց յետոյ, քաղ. վարչութիւնը կառաջարկի էլեկտրաքարշի անոնիմ ընկերութեանը Կախէթեան խճուղուց էլեկտրաքարշի գիծ անցկացնել մինչև Նաւթլուղ կայարանը։

◆ Քաղաքային վարչութիւնը առաջարկել է էլեկտրաքարշի վարչութեանը՝ էլեկտրաքարշի գիծ անցկացնել մինչև քաղ. նոր կառուցվող սպանդանոցը։ Էլեկտրաքարշի վարչութիւնը հրաժարվում է կատարել այդ առաջարկը, պատճառաբանելով որ դա իր պարտաւորութիւնը չէ։ Ինչով կը վերջանայ այդ վէճը, յայտնի չէ։

◆ Այս տարի բօրսային առևտրի և գիւղատնտեսութեան ներկայացուցիչների համագումարների խորհուրդը նորերս ուղարկել է զանազան առևտրա-արդիւնաբերական կազմակերպութիւններին և բօրսային կօմիտէտներին առևտրական կրթութեան մասին խորհրդակցելու նպատակով այս տարի Պետերբուրգում հրաւիրվելիք ռուսական համագումարի ծրագիրը։ Այդ ծրագրի մէջ մտնում են հետևեալ հարցերը. կառավարչական նպաստ, կրթական ձեռնարկներ, ուսուցիչների և աշակերտների կանոնադրութիւնն ու իրաւունքները, հասարակական և մասնաւոր առևտրական դըպրոցներ, նրանց իրաւունքները, բարձրագոյն առևտրական դպրոց բանալու խնդիրը Պրիամուրեան շրջանում և Կովկասում, առևտրական ստորին, միջնակարգ և բարձրագոյն կրթութիւնն ու նրանց փոխադարձ կապը իրար հետ և այլն։

◆ Թագաւոր Կայսրը հաճել է բարձրագոյն թոյլ տալ Թիֆլիսի հայոց Թանդոյեան եկեղեցու հոգաբարձութեանը եկեղեցապատկան անշարժ կալուածները գրաւ դնելով բանկային հաստատութիւններից որևէ մէկում փոխառութիւն անել 10,000 րուբլի՝ երկյարկանի տան շինութեան համար վերցրած պարտքը հանգցնելու նպատակով։

◆ Վրաստանի էկզարխ Ինոկէնտին, որ ներկայումս գտնվում է Կիսլօվօդսկում, Թիֆլիս է վերադառնալու օգոստոսի սկիզբներին։

◆ Յուլիսի 29-ին Թիֆլիսի նահանգապետ Ա. Գ. Չերնեավսկին ծառայութեան գործերով ուղևորվեց Դուշէթի գաւառը։

◆ Ստացվել է «Հանդէս Ամսօրեայի» օգոստոս ամսվայ համարը։ Դէպքից օգտվելով արձանագրում ենք այն անկանոնութիւնը, որ մեր մէջ յաճախ է տեղի ունենում արտասահմանեան հրատարակութիւնների ստացման ժամանակ։ Այսպէս, օրինակ, յուլիս ամսվայ «Հանդէս Ամսօրեայի» համարը մինչև օրս չէ ստացվել «Մշակի» խմբագրութեան մէջ։ Ինչպէս տեղեկացանք, նոյն համարը մինչև օրս դեռ չեն ստացված և մի քանի այլ խմբագրատներում։ Մինչդեռ նոյն յուլիսի համարը Ալէքսանդրօպօլում ստացվել է շատ վաղուց, և մեզ մօտ էլ, ինչպէս պատմում են, կիրակի օրերը Սոլդատսկի բազարի հին գրքեր վաճառողների մօտ ծախվելիս է եղել։ Ինչով բացատրել այդ երևոյթը։

◆ Անդրկովկասեան Օլգինսկի մանկաբարձական ինստիտուտի տեսուչ Ա. Ր. Ֆիշերը և դասատու ու գինեկօլօգիական բաժանմունքի կառավարիչ Ա. Գ. Բարսուկօվը, հիւանդութեան պատճառով, համաձայն իրանց խնդիրքի, արձակվում են պաշտօնից։ Առաջինի փոխարէն նշանակվում է նոյն դպրոցի մանկաբարձական մասի կառավարիչ Ե. Մ. Սօբէստիանսկին՝ դիրեկտօր, իսկ երկրորդի փոխարէն՝ Միքայէլեան հիւանդանոցի բժիշկ իշխան Ի. Ն. Տուժանովը։

◆ Յուլիսի 28-ին, գիշերով, ժանդարմական վարչութեան կարգադրութեան համաձայն խուզարկութեան ենթարկվեց ամերիկեան քաղաքացի Յակովբ Ղազարեանի բնակարանը, որը մեր գրականութեանը յայտնի է իր «Եաղ ասա» և այլ մանկական բեմական գրուածքներով, այլ և իր աշխատակցութեամբ հայ մամուլին։ Խուզարկութիւնը, որ տևեց մօտ երեք ժամ, չը տուեց ոչ մի արդիւնք։

◆ Յուլիսի 30-ին, ցերեկվայ ժամը 1-ին, Նովօ-Արսէնալնայա փողոցի № 9 տանը ապրող թելաւեցի Սօֆիա Ալէքսանդրօվնա Կիկնաձէն (գերձակուհի) մտնելով պարսից ընդհանուր հիւպատոսարանի դիւանատունը Գուդովիչա փողոցի վրա՝ ինչ-որ այրող հեղուկ թափեց հիւպատոսարանի պաշտօնեայ Մէհտի-խան Աղաբէկովի երեսին, որից վառվեց Աղաբէկովի դէմքը և մի աչքը։ Վիրաւորվածին իսկոյն ուղարկեցին հիւանդանոց։ Յանցաւոր Կիկնաձէն կալանաւորված է։

◆ Մեզ խնդրում են տպագրել հետևեալը. «Արտասահմանից Թիֆլիս վերադարձաւ Բենիկ վարդապետը, որը Լօզան (Շվէյցարիա) էր գնացել դժուար բուժելի հիւանդութիւնից ապաքինելու համար։ Իրան քննութեան ենթարկել տալով յայտնի օպերատոր բժիշկ Րուլին և ուրիշներին, ստացել է հանգստացուցիչ պատասխան իր հիւանդութեան նկատմամբ, որն առ այժմ վտանգ չէ սպառնում։ Հայր-սուրբը իր գործերը կարգաւորելու մտադրութեամբ Թիֆլիսից մեկնելու է Էջմիածին»։

◆ Շուշու երկաթուղային գծի կառուցման վերջնական հետազօտութիւնները աւարտվեցին արդէն։ Մանրամասն նախագիծը մօտ օրերս կը ներկայացվի ճանապարհների հաղորդակցութեան մինիստրին։ Աշխատանքները կը սկսվեն առաջիկայ աշնանից։

◆ Բագուում ուղղափառ սինօդը մտադիր է բանալ հոգևոր դպրոց։ Այդ նպատակով սինօդը հարցրել է էկզարխի կարծիքը՝ այդ դպրոցում տեղական լեզուներից մէկը դասաւանդելու մասին։

◆ Բագուում բացվել է սանատօրիա ալկօհօլիկների և ջղային ու հոգեկան հիւանդների համար։ Սանատօրիայի կառավարիչ է նշանակված բժ. Իզրայէլովիչը։

◆ Սենատը վաւերացրել է Բագուի նահանգական դատարանի վճիռը, որով մեղաւոր է ճանաչվում „Бакинецъ“ լրագրի խմբագիր Ջիօրիձէն մամուլի միջոցով Բագուի Միքայէլեան հիւանդանոցի բժ. Խանգամիրեանին վիրաւորելու համար։

◆ Դուշէթից հաղորդում են, որ Ջաշա և Բակօսկուրի գիւղերին մօտիկ դաշոյններով զինված 4 չարագործներ օրը ցերեկով կողոպտել են Մօիսէյ Գ. Աբխազօվին, խլելով նրա մօտ եղած անցագիրն ու 28 ր. փողը։

◆ Խանքենդի ծխատէր Պետ. ք. Տէր-Յովհաննիսեանը, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ յիշեալ աւանի մի քանի անձինք իրան են վերագրում «Մշակի» № 143-ի գաւառական տեղեկութիւնների բաժնում «Խանքենդի իրականութիւնից» վերնագրով և երկաստղ (**) ստորագրութեամբ լոյս տեսած թղթակցութիւնը, խնդրում է մեզ յայտնել, որ յիշեալ գրութեան հեղինակը ինքը չէ։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

◆ Պետական Դումայի ընտրողական ցուցակները շուտով աւարտելու համար Թիֆլիսի քաղաքային վարչութեան կողմից հրաւիրված է աշխատողների երկրորդ խումբ, որոնք ամսի 30-ից սկսել են աշխատել։

◆ Պետական բնակարանային տուրք չը վճարող բնակարան վարձողներն ու կենսաթոշակ ստացողները Պետական Դումայի քաղաքային ընտրողական ցուցակների մէջ իրանց մտցնել տալու համար, նոյնպէս և նրանք, որոնք իրանց կանանց կամ մայրերի հաւատարմաթղթով են ուզում մասնակցել ընտրութիւններին, պէտք է ներկայացնեն իրանց յայտարարութիւնները մինչև օգոստոսի 7-ը, ցերեկվայ ժամը 3-ը։ Այնուհետև այլևս չեն ընդունվի խնդիրներ և օգոստոսի 8-ին ընտրողական ցուցակները կը յայտարարվեն։

◆ Ներկայ օգոստոսի վերջերին հրաւիրվելու է ռուսաց եպիսկոպոսների համագումար 4-րդ Պետական Դումայի ընտրութիւնների հարցի մասին խորհրդակցելու։ Այդ համագումարը տեղի կունենայ Մոսկվայում օգոստոսեան հանդէսներին, ուր ներկայ են լինելու 12—16 եպիսկոպոսներ, սինօդի անդամները և օբեր-պրօկուրօրը։ Վճռված է յատկացնել եպիսկոպոսներին Դումայում ոչ աւելի, քան 4 տեղ։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ. ԳԵՂԱՐ.

ԳՆԱՀԱՏԵԼԻ ԱՇԽԱՏԱՆՔ

Այս վերնագրի տակ՝ «Մշակի» անցեալ 1911 թ. № 109-ում «Ազգագրական Հանդէսի» խմբագիր Ե. Լալայեանի՝ Վասպուրականում արած գիտական-հնախուզական ճանապարհորդութեան մասին գրելով՝ խօսել եմ այն օգտակար ծառայութեան վերաբերեալ, ինչ որ արել է Եր. Լալայեանը։

Այս անգամ՝ ստանալով նոյն հանդէսի XXI գիրքը, սրտի հաճութեամբ, որպէս բնավայրի զաւակ, պարտաւորութիւն եմ զգում դարձեալ գրել, ինչ որ արժանի է։

«Ազգագրական Հանդէսի» ներկայ հատորում զետեղված ուսումնասիրութիւնը շարունակութիւնն է Վասպուրականի նշանաւոր և շէն վանքերի այն ուսումնասիրութեան, որը Ե. Լալայեանը անցեալ տարի տպել էր նոյն հանդէսի նախորդ համարում։

Սկսելով Նարեկայ հռչակաւոր վանքից (երես 37—100)՝ Վանայ ծովի հարաւային և հիւսիսային եզերագծով հասել է մինչև Հայոց Ձորի Խէքայ վանքը։ Լիմ, Կտուց անապատների, Վերին և Ստորին Վարագների մասին տուել է խիստ հետաքրքրական և ուսանելի տեղեկութիւններ իրանց պատմական և գրաւոր յիշատակարաններով, ի մասնաւորի՝ Ստորին Վարագի, իւրաքանչիւրն իր տեղում դուրս բերելով ուրուագծերն և պատկերները։

Եր. Լալայեան գրելով մեծագործ Արծրունիների մայր մենաստանում ունեցած հրաշագեղ, քանդակագործ 7 տաճարների, եկեղեցիների, մատուռների վերաբերեալ՝ աչքի առաջ է ունեցել նաև գիշերօթիկ դպրոցը, տպարանը, մատենադարանը, այլև՝ գիւղատնտեսական տեսակէտով՝ Վարագի հանդն ու անդաստանը, դաշտն ու հովիտը, վարելահողն իրանց արդիւնաբերութեամբ, որոնք արժանի են մասնագէտ գիւղատնտեսների ուշադրութեան, որտեղում ամենայարմարաւոր և անհրաժեշտ է նկատի ունենալ հիմնելու գիւղատնտեսական դպրոց։

Իմ աշխատասիրած «Սրբավայրեր Վասպուրականի» գրքում խօսելով Վարագների մասին և նրա բնութեանը, առողջարար օդին ու ջրին, լայնածաւալ հանդ ու անդաստանին մեծ նշանակութիւն տալով՝ ես էլ նոյն համոզմունքին եմ, որ արժանի է Վարագն այդ շնորհին, որովհետև նախ որ՝ շատերի ցանկութիւնն է, և երկրորդ՝ նախաձեռնողները յարգած և կատարած կը լինեն նրա մեծանուն վանահօր՝ հանգուցեալ Խրիմեանի վաղուց փայփայած նպատակը։

«Ազգագրական Հանդէսի» նոյն XXI գրքում հրատարակված հէքիաթներն էլ խիստ ընտրովի են, մանաւանդ «Սասնայ տունը» իր խօթ ճիւղաւորութեամբ (եր. 101—165) և «Ոստանայ տունը»։

Այս երկու հէքիաթները արժանի են գիտնականների խորին ուշադրութեան, որովհետև այդ հէքիաթներում պատկերանում է մեր տոհմային, պատմական իրողութեան մի ստուգապատում ցեղական շարք։

Դրանց ոչ թէ սոսկ հէքիաթներ պէտք է համարել, այլ պատմական իրողութիւններ, որոնք աւանդական շարունակութեամբ հէքիաթի կարգ են անցել, և մենք այդ հէ-

---

սէն ևս առիթ եմ ունեցել մտածելու և 6 ամիս առաջ, Մոսկվայի վաստակաւոր պրօֆէսոր Ումովի զեկուցումը *) լսելիս. բայց այն ժամանակ այնքան խորունկ չէի համոզված այդ ճշմարտութեան և չէի ըմբռնած գերագոյն ստեղծագործութեան տարբերը, ինչպէս այժմ։ Վերյիշելով պրօֆէսոր Ումովի ասածը, ես աւելի խորն եմ հասկանում նրան, քան այն ժամանակ. այո, մարդկանց ամենանուիրական բարոյական պարտականութիւնն է շարունակել կեանքը այս աշխարհում. պէտք է նոր էակներ գոյացնել և ուրիշին յանձնել այն, ինչ մարդս ստացել է իր ծնողներից, որպէսզի այս մեր մոլորակում ղարիբ մարդկային ցեղը չընդհատվի ու վերանայ, այլ յարատևէ. այս՝ իւրաքանչիւր անհատի պարտականութիւնն է, այս մի յաւիտենական ճշմարտութիւն է, որ երբ լուսոյ մի կանթեղ՝ դէպի իրան է բևեռելու բոլորի հայեացքները և գոյացնելու է երկունքը, ամենից մեծ ստեղծագործութիւնը այս աշխարհում։ Ծննդկանի երկունքը հրապուրիչ է ոչ թէ միայն որպէս իրագործումն յաւիտենական ճշմարտութեան, այլ և նա գերագոյնն է բոլոր ստեղծագործութիւններից. նա յղացումն է կատարեալ էակի. այդ յղացումն է տանջանքով ու ցաւերով ծնվող մանկան, որ աշխարհ դուրս գալուն պէս մոռացնել է տալիս ամեն ցաւ ու տառապանք և խնկական երանութեան օրեր է պարգևում ծնողին։ «Անցուկ-մոռցուկ են ծննդկանի ցաւերը» ասում են մեր մայրերը, որոնք իրանք էլ են ապրել այդ ցաւերը, և խրախուսում են նորերին դիմանալ երկունքի միջոցին. բայց մեծագոյն տառապանքն են այդ ցաւերը երկունքի միջոցին. մեծագոյն ստեղծագործութեան երկունքով բռնվածի դրութիւնն է յուզիչ, մարդու բնական հանճարի արտադրման այս պրօցէսն է երկարատև ու դժուարին։ Մէջքի սոսկալի ցաւերն են հառաչանքի աղբիւրները, հեծկլտանք, մկանների ուժգին լարումն, ատամների կրճտացումն, գոլորշիացած փրփուրի մեծ կոյտ շրթունքների վրա, ձեռների յուսահատական շարժում, որը ձայնի հետ համաչափօրէն կրծքի, մէջքի ու փորի մկանների լարումով՝ մանկիկին է արտաքսում արգանդից՝ անկախ ապրելու, սեփական թոքերով շնչելու և ոտքի վրա կանգնել սովորելու. ծննդկանը տակը փռած սաւանն է գզգզում, մազերն է ցաւեցնում ձեռներն ուժգին սեղմելով, հոգեմաշ աղաղակներով է լցնում սենեակը. և ահա երկունքի բեռը՝ շնչասպառ է լինում, մայրն է ազատվում, մարդկութեան մի նոր հանճար է պարգևում...

Տեսէք այս բոլորը, և դուք չէք կարող ծունկ չը չոքել վեհ տառապանքի ու ստեղծագործող ցաւերի առաջ, որոնք նոր ուղեղ, նոր աչքեր, նոր լեզու և մարմին են աւելացնում մարդկութեան գումարին։ Տեսէք այս բոլորը, և դուք չէք կարող վեհափառ սէր չը տածել դէպի իւրաքանչիւր ստեղծագործող մայր, որ երկունքի տառապանքի բաժակն է ծծել, մէջքն է այնքան ցաւեցրել ու աղեկտուր այնքան ձայներ է արձակել։

Երկիւղածութեամբ և պատկառանքը սառած դէմքներիս՝ մենք պէտք է համբուրենք բոլոր մայրերի տառապանքը, յատուկ համոզումով պէտք է աստուածացնենք նրանց երկունքը, պաշտամունք դարձնենք, որովհետև դրանից է կախված հաւաքական մարդկութեան և անհատների գոյութիւնը։

* *

Ես հիմա եմ հասկանում, թէ ինչու քրիստոնէութիւնը իր խորհուրդների մէջ է մտցրել և՛ ամուսնութիւնը, որ հետևցնում է երկունք և գոյացումն նոր էակի. այդ ամենախորհրդաւորն է մնացած խորհուրդներից. այս հետևանք է երկար դիտողութեան և լուրջ մտածողութեան. այս ըմբռնումն է այն յաւիտենական ճշմարտութեան, որ պրօֆէսոր Ումով յիշեցրեց վերջերս և որ դեռ շատերը չեն ըմբռնած։ Ամուսնութիւնը խորհուրդ էլ պէտք է մնայ. ծննդկանի երկունքի պատճառը՝ ամենավըսեմ յոյզերն ու կրքերը գերագոյն պաշտամունքի առարկայ պէտք է լինեն, որովհետև նրանք են պաշտողները, մարդկանց գոյացնողները։ Բարի ծննդկաններից ուրիշ կանանց գոյութիւնը աւելորդ է և մեղադրելի։

Կասեն, թէ անհրապոյր բան է երկունքի ցաւերով բռնվելը, ծննդաբերութեան տառապանքով տանջվելը. ոմանք և այս պատճառով խոյս են տալիս երկունքով բռնվելուց։ Ճիշդ որ դժուար են այդ ցաւերը և աննախանձելի է երկունքը մինչև ազատվելը. բայց յետոյ... քանի երկունք կարժենայ մի նոր էակի անմեղ ժպիտը և առաջին թոթովանքը։ Ծննդաբերութեան ցաւերը այնպէս չեն եղել առաջ, ինչպէս ներկայումս է. ինչպէս իւրաքանչիւր բնական երևոյթի, նոյնպէս և այս դէպքում պէտք է ընդունել էվօլիւցիայի սկզբունքը. մարդկանց համայնական կեանքի աւանդների աստիճանական փոփոխութիւնը, հագուստների մետամորֆօզը, քնքոյշ կենցաղին հակվելը, դասակարգերի գոյացումն և ոմանց անարդիւնաբեր, այլ միայն սպառող գոյութեան եղանակը—այս բոլորը ի մի ժողոված՝ երկունքի էվօլիւցիայի պատճառներն են կազմում։ Այս էվօլիւցիան հիմա էլ մեր աչքերի առաջն է. համեմատեցէք գեղջկուհի ծննդկանին և հարուստ քաղաքի ազնուականուհուն. մէկը կալի մէջ, կամ քշելիս է մանկիկը ծնում, փաթաթում և դնում դէզի տակ ու իր գործը շարունակում, կամ ձիու վրա է երկունքով ազատվում, ճանապարհ գնալիս. իսկ միւսը՝ հազար տեսակ բժըշկական միջոցներով, մի քանի մանկաբարձուհիների ու բժիշկների օգնութեամբ։ Առաջինը չէ զգում կամ չէ արտայայտում զգացած ցաւերը, երկրորդը չը գիտէ լուռ տառապանքը, և ի վերջոյ ծննդաբերական երկունքը դառնում է անտանելի տառապանք, որից և խրտնում են նորերը։ Եւ եթէ այժմ մեծագոյն ստեղծագործութիւնը կապված է տանջանքի հետ, այդ աւելի է բարձրացնում մեր աչքում գերագոյն ստեղծագործութեան հեղինակներին. նրանք վայել են աւելի մեծ յարգանքի և սիրոյ, որովհետև դիմացան ներկայ երկունքի ցաւերին ու տառապանքի բովով անցան անվնաս՝ մի նոր էակ ստեղծելով։

Նրանք մեծ են և կարող են կրկնել՝

Rien ne nous rende si grand
Qu'une grande douleur.
(Ոչինչ այնքան չէ մեծացնում մեզ,
Քան մի մեծ տառապանք)։

Տառապանքն է մեծութեան ատրիբուտը և տառապող ծննդկանը ամենամեծ մարդն է, որին պէտք է երկրպագել, նրա ստեղծագործութիւնը պաշտել. նա արժանի է դրան. իր մարմինն է կտրատել և յետոյ կարել, աղաղակով հանգստութիւնն է հայցել, գիշերներն անքուն ցաւ քաշել ու գողտուկ լսելի մռմռացել։ Սուրբ է այդ մռմռոցը, կենդանի մանկիկի ծնման օրհներգն է այդ։

Չեմ մոռանայ այդ։

Գ. Տէր-Ռուբինեան

---

*) Երկրորդ Մենդելէեվեան համագումարը. տես իմ նամակը «Մշակի» այս տարվայ փետրվարի 1-ի №-ի մէջ։

քիաթներից տեղեկանում ենք Ասորիքից «ի Հայս փախստական եղեալ Ատրամելեքի և Սանասարի» անցեալը, որոնցից առաջացան Սասունիք և Արծրունիք՝ միմեանց սահմանակից այն մեծ նախարարութիւնները, որոնք Հայկազանց Թագաւորութեան ժամանակից սկսած՝ այնքան լաւ ու վատ դերեր խաղացին հայոց աշխարհում։ Արծրունիների մայրաքաղաքը մնաց Ոստան՝ իր դրախտանման այգիներով, իսկ Սասունինների բնակավայրը՝ այն լեռնային անառիկ աշխարհը, որ կոչվում է Սասունք։

Եր. Լալայեանը չը բաւականանալով Վասպուրականում իր արած ճանապարհորդութեամբ՝ անցել է Մոկս և Շատախ գաւառները։ Անցել է աւելի հեռուն՝ Ջուլամէրիկ (հին Տմորիք), որ մի լեռնային աշխարհ է, Տիար-Տխուբ, մինչև ասորոց կաթողիկոսանիստ Կոչանիս աւանը, ուր հիւրասիրվելով մար-շիմօնից՝ հաւաքել է հետաքրքրական տեղեկութիւններ ասորիների ներքին, արտաքին յարաբերութեան, կենցաղի և նրանց տոհմային վարվողութեան, պսակի, պաշտամունքի և այլ ծէսերի վերաբերեալ։ Սակայն՝ ինչպէս Մոկաց և Շատախի, նոյնպէս Ջուլամէրիկի գաւառների հետախուզական, ազգագրական, հնագիտական տեղեկութիւնների մասին առայժմ ոչինչ չէ գրվել։ Բայց մենք գիտենք, որ Եր. Լալայեանն այս երկրորդ անգամ աւելի մեծ պաշարով է վերադարձել Վասպուրականից. և այդ գիտական պաշարը նա անշուշտ հրատարակելու է «Ազգագրական Հանդէսի» յետագայ գըրքերում։

Տողերիս գրողն էլ անցեալ ամառ գտնըվելով Վան՝ տեղեկացաւ, որ Ե. Լալայեանն ունեցել է նպատակ՝ հնագիտական պեղումներ անելու յայտնի վայրերում։ Իր այդ նպատակը թէև Վանի ռուսաց հիւպատոս Օլֆէրիեվի միջոցով յայտնել է տեղական թիւրք իշխանութեան, սակայն անորոշ է մնացել իրաւունք ստանալու խնդիրը և գուցէ ապագայում աջողվի։

Եւրոպացի ճանապարհորդներ թէև անցել են Վասպուրական գիտական հետախուզական նպատակով, նրանց տուած հատ ու կտոր տեղեկութիւնները թէև հրատարակված են, սակայն ես համոզված եմ, որ նրանք չեն կարողացել տալ մեզ այն բաւականութիւնը, ինչ որ մենք ստանում ենք հայ հետախոյզի միջոցով, որն իսկապէս նուիրված է այդ նպատակին՝ նկատի առնելով շատ խոչընդոտներ։

Մեր հայկական տոհմային իրականութեան մէջ, կուլտուրայի զանազան ճիւղերում— լինէր գեղարուեստական, գիտական, հնագիտական, բանահիւսական (բանաւոր և գրաւոր), ժողովրդական երգերի, հէքիաթների, նախապաշարումների — հետամուտ հետախոյզներ շատ ու շատ սակաւ ունենք, իսկ այդ նպատակին նուիրված ընկերութիւններ՝ աւելի քիչ, միմիայն Հայոց Ազգագրական Ընկերութիւնը, որի արդիւնաւէտ գործունէութեան ու աշխատանքի արդիւնքը աւելի քան մի տասնեակ տարի է, որ տեսնում և օգտվում ենք։

Օսմանեան Հայաստանը հետախուզվելու— թէ գիտական և թէ տնտեսական նպատակով—շատ պէտք է ունի։

Մենք վստահ ենք, որ Եր. Լալայեանը որպէս այդ նպատակին պատրաստված և նուիրված մարդ, կերրորդէ, կը չորրորդէ իր այցելութիւնը և ապագայ տարիներում մի շրջան կանէ դէպ Մեծ-Հայք, դէպ Երզրում և հարևան գաւառները։

Ցուսանք և սպասենք։ Գ. Շէրենց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ՍՈՒՐԱՄԻ ՀԱՅՈՑ ԾԽ. ԴՊՐՈՑԻ 50-ԱՄԵԱԿԸ

Տեղիս գործակալ Յովսէփ ք. Ասիւծեանի և դպրոցիս աւագ ուսուցիչ Յովհ. Դաւթեանի ջանքերով մի խումբ երիտասարդներ միտք են յղացել տօնել նոյն դպրոցի 50-ամեակը։

Ամբողջ հոգով ողջունում և մաղթում ենք՝ բոլորովին խրախոյսի արժանի այդ վեհ գործի ձեռնարկողներին՝ աջողութիւն, մանաւանդ որ նրանք ձգտում են ապահովել դպրոցի եթէ ոչ ամբողջ, գոնէ նրա ծախքերի մի մասը։

Որքան յիշում ենք, այս անդրանիկ դէպքն է մեր՝ Վրաստանի թեմի դպրոցական պատմութեան մէջ։

Տօնել այսպիսի շրջապատում մի դպրոցի կեանքի ամբողջ կէս դարը, ուր հայ երեխան իր ընտանիքում թոթովում է իրան բոլորովին օտար լեզուով, ուր այնքան խորթ է հայ ժողովրդին իր հարազատ մայրենի լեզուն, այդ, մեր կարծիքով, բացի սոսկ հանդէսից, ունի նաև մի ուրիշ, աւելի մեծ խորհուրդ... Իր դպրոցի անունով Վրաստանի հայը կատարում է կուլտուրական այն ձգտման տօնը, որով նա աշխատում է իւրացնել իր սեփական լեզուն, կեանքը և ծագումը, մաքառելով տգիտութեան դէմ, որ բաղդը դարերի ընթացքում ծանրացրել էր իր ուսերին։

Ամբողջ 50 տարի այս դպրոցը, ոչ թէ իբրև մի հսկայ ջահ՝ որ իր առատ լոյսով հալածում է իր ընդարձակ շրջակայքի խաւարը, այլ իբրև մի համեստ ճրագ իր աղօտ բոցով փարատել է գոնէ իր շրջապատի մութը...

Բայց ցաւելով ենք յիշում, որ մեր աւանի այդ եզակի ճրագը առկայծում է, նրա միջից օրըստօրէ ցամաքում է վառելիքի նիւթը, չը նայելով հ. Յովսէփի անխոնջ ջանքերին, որ ամեն ճիգ թափելով, մանաւանդ այս վերջին 20 տարիների ընթացքում, հազիւ կարողանում է փրկել հանգչելուց նրա աղօտ լոյսը...

Բայց ինչքան էլ մի մարդ եռանդով գործի, թէկուզ նա լինի գերբնական ոյժերի տէր, այնու ամենայնիւ դարձեալ չափազանց ծանր է սոսկ իր ոյժերով պահպանել մի հիմնարկութիւն, ընդհանուրի գործ՝ առանց հասարակութեան խրախոյսի, մանաւանդ երբ նա իր աշխատանքի ընթացքում ոչ միայն հանդիպում է ցուրտ ժպիտով իրան նայող դէմքերի, այլ և արգելքների... Մի վերաբերմունք, որ կարող է սպանել մարդու մէջ ամեն մի բարի ձգտում, ամեն մի եռանդ, և ստիպել բոլորովին խուսափել ասպարէզից, որից յետոյ, մի րոպէ անգամ չենք կասկածում, դպրոցը, այդ հոգեվարք հիւանդը կաւանդի հոգին։

Ուստի ես, իբրև նոյն դպրոցի անդրանիկ պարտաճանաչ սաներից մինը, կոչ եմ կարդում իմ այն բոլոր ընկերներին, որոնցից շատերը այսօր բարձր ուսումի, դիրքի և ապահով պաշտօնի տէր են, նրանց՝ որոնց բիւրեղի պէս ջինջ մանուկ հոգում այդ համեստ, սրբազան մատուռն է առաջին անգամ լոյսի շողքը խաղարձակել ու փարատել նրանց հոգու, մտքի խաւարը... Նմանապէս կոչ եմ անում և իմ այն հայրենակիցներին, որոնք իրանց ծննդավայրից դուրս են ապրում, իրանց վիճակից գոհ ու ապահով, որ յիշեն, թէ դեռ առկայծում է իրանց ծննդավայրի միակ համեստ ճրագը, յիշեն, որ զառամել է իրանց աւանի լոյսի միակ նուիրական մատուռը, որ մի զոյգ հինաւուրց սիւներ հազիւ են կարողանում պահպանել նրա խարխուլ շէնքը, և նա հազիւ կարող է դիմանալ մի թեթև ցնցումի... Նա հոգևարքի մէջ է, նրա կեանքի փրկութիւնը իրանցից—իմ բաղդաւոր՝ բայց տարաբնակ հայրենակիցներից է սպասվում։ Ի՞նչ անուն կը տան տարաբնակ բաղդաւոր սուրամցիներն այն բժշկին, որ իմանալով հիւանդին մահից փրկելու դեղը՝ զլանում է նրանից գոնէ մի կաթիլ թափել նրա մահացու վէրքի վրա, որ ականջ փակելով հոգևարքի աղաչանքին, տառապանքին, ցուրտ հայեացք նետելով հիւանդի դժգոյն դէմքին, անցնում է նրա կողքից...

Օտարաբնիկ բարեկեցիկ սուրամցիներից իւրաքանչիւր ոք զոհելով իր չնչին լուման՝ կարող է փրկել իր հայրենի աւանի լոյսի տաճարը մահից։

Նախկին սան՝ Յովսէփ Գրձելեան

Բօրժօմ, 28 յուլիսի

ՄԻ ՀԱՄԵՍՏ ՀԱՐՑՄՈՒՆՔ

Երեւանի փոխ-թեմակալ տէր Խորէն եպիսկոպոսին եւ թեմ. դպրոցի տեսուչ Արշակ Չիլինգարեանին

Հայր Մելեան աւ.-քահանան իր «Իմ բաց պատասխանը պ. Մի Հային» յօդուածի մէջ («Մշակ» № 157, «Հորիզոն» № 150) յայտնագործում է հետևեալը. «... Գալով Երեւան և Էջմիածին, առաջին պարտքս համարեցի հաւատարիմ և նոյն իսկ բուն աղբիւրից ստուգել այդ հանգամանքը (Էջմիածնից Կ. Պօլիս ուղարկած կաթ. պատգամաւորացուների ցուցակը)։ Երևանում սրբազան Մուրադբէգեան և Ա. Չիլինգիրեան պարզապէս յայտնեցին, որ սուտ է սրբազան տեղակալին վերագրել ցուցակ կազմելու և սրբազան Մանկունուն նամակ գրելու պարագան։ Այդ ցուցակը կազմել են և նամակը գրել են իրանք»։ (Ընդգծ. Մ. աւ.-ք. Մելեանի)։

Որովհետև—թող ներէ ինձ հ. Մելեանը— նրա՝ կաթողիկոսական խնդրի շուրջը գըրուածքներին թերահաւատ վերապահութեամբ եմ նայում, ուստի ձեզ, գերապատիւ հայր-Խորէն և պ. Արշ. Չիլինգարեան, դիմում եմ հետևեալ համեստ հարցմունքով.

Ճշմարիտ են հ. Մելեանի ձեզ վերագրած խօսքերը.—«Սուտ է սրբ. տեղակալին վերագրել ցուցակ կազմելու և սրբ. Մանկունուն նամակ գրելու պարագան։ Այդ ցուցակը կազմել են իրանք» (այսինքն երկուսդ)։

Եթէ այո, ապա՝

Ինչու դուք երկուսդ, իր ժամանակին, երբ այդ չարաբաստիկ «ցուցակն» էր քաշքըշվում, նրա շուրջը աղմուկ բարձրանում, ու դրա հեղինակը անվերապահ համարվում էր տէր-տեղակալը, երբ «Հորիզոնն» անգամ բացարձակ չէր հերքում «ցուցակի» գոյութիւնն ու հեղինակի ով լինելը, այլ միայն զգուշացնելով ուզում էր «ներշնչել» սկզբում «ցուցակի» անգոյութիւնը, վերջը հեղինակի ոչ տէր-տեղակալը եղածը,—ասպարէզ չեկաք ու հրապարակով չը յայտնեցիք, թէ «այդ ցուցակը կազմել էք և նամակ գրել» դուք երկուսդ. ինչու լարված մտքերը չը հանդստացրիք, կասկածները չը փարատեցիք ու չը փրկեցիք տէր-տեղակալի պատիւը, որը համարվում էր կաթողիկոսական ընտրելի։ Միթէ այդպէս էիք ընդունում համայն հայ ազգի ու եկեղեցու պետի պատիւը։

Բարոյական ծրգխի արդարացում էք գտնում ձեր այս վարմունքի համար, որ մինչ այժմ ստուերի տակ թագնված՝ լոյս աշխարհ չէիք դուրս գալիս և՝ մի կողմից՝ անմեղ կասկածված բարձրաստիճան եկեղեցականին չէիք ազատում անտեղի մեղադրանքից ու միւս կողմից՝ հազարաւորներին, ո՛չ հօրիզոնական կուսակցութեան լրութեանը, անմեղին դատափետելու, մեղադրելու յանցանքի մէջ գցում։

РЕГУЛИРОВАНІЕ отправленій кишечнаго тракта это необходимое условіе для достиженія пріятной старости.

СКАВУЛИНЪ

въ видѣ пилюль безъ запаха и вкуса—вотъ единственное несомнѣнное средство, регулирующее пищевареніе.

Важная перемѣна: Количество пилюль въ коробкахъ „Скавулинъ" значительно увеличено безъ повышенія цѣны.

(В. 42031)

Երբ կը կարդամ իմ այս համեստ հարցման պատասխանը, այն ժամանակ կը դիմեմ «րեպրեսիանների» գերազանցօրէն մասնագէտ հ. Մ. աւ.-ք. Մելեանին, խնդրելով նշանակել ձեր վարմունքի արժանի պատիժը։

Homo sum

Յ. Գ.—Սիրում եմ յուսալ, թէ իմ համեստ հարցմունքը չի արժանայ ձեր երկուսի «արհամարհական լռութեանը»։

Նոյն

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—o—

◆ «Միութիւն և Առաջադիմութիւն» կենտրոնական կոմիտէի անդամներից մի քանիսը ժամանեցին Սալոնիկ, նոր կառավարութեան դէմ օպպօզիցիա կազմակերպելու մտադրութեամբ՝ դրա համար օգտվելով զօրքի մէջ գտնված երիտասարդ-թիւրքական տարրերից։ Իրօք, երկուշաբթի երեկոյեան 103 օֆիցեր հաւաքվեցին զինւորական կլուբը, հեռագրեցին սուլթանին բողոքելով պալատի արձակման համար և միջնորդելով հեռացնելու իշխանութիւնից նոր մինիստրութիւնը։

Սակայն երեքշաբթի առաւօտեան, երբ այդ հեռագրի ուղարկման լուրը տարածվեց քաղաքում, զօրամարմնի հրամանատարին ներկայացաւ մի պատգամաւորութիւն մնացեալ օֆիցերներից, խնդրելով թոյլատրել նրանց՝ բողոքելու 103 օֆիցերների հեռագրին, որոնք կազմել էին այդ հեռագիրը տուեալ կորպուսի 750 օֆիցերների անունից առանց համապատասխան լիազօրութիւն ունենալու։ Կորպուսի հրամանատարը ոչ միայն թոյլատրեց՝ այդպիսի հեռագրական բողոքը, այլ և ինքն էլ ստորագրեց, կցելով դրան յայտարարութիւն, որ իր կորպուսի օֆիցերները ներքին քաղաքականութեան վերաբերող հարցերի նկատմամբ չէզոքութիւնն անփոփոխ են պահպանելու։

«Միութիւն և Առաջադիմութիւն» կենտրոնական կոմիտէի համար այդպիսի կոնտր-դեմօնստրացիան լուրջ հարուած էր, աւելի ևս ստորացնելով նրա գործը հասարակութեան աչքում, որ առանց դրան էլ ոչ շատ բարեացակամ էր դէպի նա։

◆ Վիէննայի մամուլը Թիւրքիայի ներկայ դրութիւնը կրիտիքական է համարում, պնդելով որ ժամանակակից Թիւրքիան իր գոյութեան ամբողջ ընթացքում դեռ ևս չէր ապրել այդպիսի իրա համար վտանգաւոր մոմենտ։ Ներքին խաղաղութեանը ամենից աւելի լուրջ կերպով սպառնում է Թիւրքերի և ալբանացիների երկպառակութիւնը, որոնք չը բաւականացան պալատի արձակումով։ Այդ երկպառակութիւնը յղի է դեռ աւելի ծանր հետևանքներով, քան նոյնիսկ երիտասարդ-թիւրքական կոնտր-յեղափոխութիւնը։

◆ Թիւրքական դեսպանը Ցետինիէում՝ չեռնօգորական կառավարութեան պատասխանը անբաւարար ընդունելով, յայտնեց, որ նա յուլիսի 27-ի առաւ. Ցետինիէից կը մեկնի, եթէ կատարեալ բաւարարութիւն չը տրվի։

◆ Հաստատ աղբիւրից հաղորդում են Վիէննա, որ Բ. Դուռը Ցետինիէի իր դեսպանի անտակտ գործունէութիւնից անբաւական լինելով՝ մտադիր է նրան ուրիշ անձնաւորութիւնով փոխարինել։

◆ Իրերի դրութիւնը Կոսսովայում մնում է լարված։ Ալբանական պարագլուխները նորից խորհրդակցութիւններ ունեցան և մշակեցին 18 կէտերից բաղկացած նոր պահանջներ։ Նրանք այդ պահանջները արդէն ներկայացրել են կառավարչական մասնաժողովին։

◆ Թիւրքաց պալատի արձակումից յետոյ, ալբանական ապստամբների առաջնորդները նորոգեցին իրանց բանակցութիւնները կառավարչական կոմիսիայի հետ, ալբանական մնացած պահանջների նկատմամբ։ Ենթադրում են, որ կառավարութիւնը ալբանացիների պահանջների բոլոր կէտերին բաւարարութիւն կը տայ՝ բացի աւտօնոմիայից։ Ի հարկէ ալբանական նացիօնալիստները դրանով չեն բաւականանայ և կը շարունակեն աւտօնոմիայի համար եղած կռիւը Հարաւային Ալբանիայում։

◆ «Köln. Zeit.» լրագրի Պետերբուրգի թղթակիցը հաղորդում է, որ ընդհատված բանակցութիւնները խաղաղութեան մասին վերսկսվեցին Ցիւրիխում թիւրքերի նախաձեռնութեամբ։ Բանակցութիւնները ղեկավարում է Պետերբուրգի իտալական դեսպանը։

◆ Մակեդոնական յեղափոխական կազմակերպութիւնների բոլոր ֆրակցիաները միացել են և կազմել մի գլխաւոր խորհուրդ, որին ղեկավարում է պաշտօնաթող փոխ-գնդապետ Պրոտօգերօվ։

◆ Իտալական մամուլը, Պուանկարէի Ռուսաստան այցելելու առիթով նկատում է, որ Ռուսաստանը թիւրք-իտալական պատերազմին վերջ տալու հարցը մտցրել է դիպլօմատիական բանակցութիւնների ծրագրի մէջ։

◆ Պետերբուրգի պարսկական դեսպանը հեռագրով յայտնեց իր կառավարութեանը, որ Մահմէդ-Ալին այժմ Կարլսբադում է գտնվում։ «Չէ կարելի սպասել—աւելացնում է դեսպանը— որ նա կը վերադառնայ Պարսկաստան, և ամեն մի անհանգստութիւն այդ առիթով ի զուր է»։

◆ Պետրօվեան հրդեհված ապարանքի կառավարիչ Տիպլօվը, «Нов. Вр.»-ի ասելով, յայտնել է, որ յիշեալ ապարանքը շինված է Պաւել Պետրովիչի օրով և ոչ մի առնչութիւն չունէր Պետրոս Մեծի հետ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառնային երթևեկութիւն)

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

—

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—Արագ գնացքը № 2—10 ժ. 8 ր. առ., հասնում է Աղստաֆա 12 ժ. 30 ր., Գանձակ 2 ժ. 58 ր., Եւլախ 4 ժ. 29 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. 7 ր. երեկ., Բագու 11 ժ. 13 ր. գիշ.: Պօստատար գնացքը № 4—12 ժ. 10 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 3 ժ. 4 ր. գիշ., Գանձակ 6 ժ. 14 ր. առ., Եւլախ 8 ժ. 13 ր., Հաջի-Կաբուլ 12 ժ. 48 ր. ցեր., Բագու 5 ժ. 20 ր. ցեր.: Մարդատար գնացքը № 6—2 ժ. 44 ր. ցեր., հասնում է Աղստաֆա 5 ժ. 34 ր., Գանձակ 8 ժ. 42 ր. երեկ., Եւլախ 10 ժ. 39 ր. գիշ., Հաջի-Կաբուլ 3 ժ. 21 ր. գիշ., Բագու 7 ժ. 38 ր. առ.: Խառն գնացքը № 106 (III կամ IV կարգի վագոններով, երբ կարևորութիւն զգացվի)—4 ժ. 37 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 8 ժ. 44 ր. առ., Գանձակ 1 ժ. 5 ր. ցեր., Եւլախ 4 ժ. 13 ր. ցեր., Հաջի-Կաբուլ 11 ժ. 45 ր. գիշ., Բագու 5 ժ. 54 ր. գիշ.:

ԲԱԹՈՒՄ.—Արագ գնացքը № 11—10 ժ. 44 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 40 ր. գիշ., Բաթում 8 ժ. 58 ր. առ.: Պօստատար գնացքը № 3—9 ժ. 41 ր. ցեր., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 59 ցեր., Բաթում 11 ժ. 36 ր. գիշ.: Մարդատար գնացքը № 5—6 ժ. 36 ր. եր., հասնում է Միխայլօվօ 10 ժ. 38 ր. գիշ., Բաթում 7 ժ. 26 ր. առ.: Խառն գնացքը № 107 (III կամ IV կարգի վագոններով, երբ կարևորութիւն զգացվի) 6 ժ. 18 ր. առ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 32 ր. ցեր., Բաթում 4 ժ. 31 ր. գիշ.:

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—Պօստատար գնացքը № 74/75—12 ժ. 40 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 7 ժ. 54 ր. առ., Ալէքսանդրօպօլ 11 ժ. 24 ր. ցեր., Էջմիածին 4 ժամ 40 րօպ. ցեր., Ուլուխանլու 5 ժ. 7 ր. ցերեկվայ (առանց Երևան մտնելու), Նախիջևան 9 ժ. 50 ր. եր., Ջուլֆա 11 ժ. 21 ր. գիշ.: Մարդատար-ապրանքատար գնացքը № 78/79 (միայն II և III կարգի վագոններով)—7 ժ. 8 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 2 ժ. 18 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ 5 ժ. 56 ր. գիշ., Էջմիածին 11 ժ. ցեր., Ուլուխանլու 11 ժ. 26 ր., Երևան 12 ժ. 19 ր. ցեր.: Մարդ.-ապրանքատար № 108/109—11 ժամ 28 րօպ. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 7 ժ. 28 ր. եր., Ալէքսանդրօպօլ 11 ժ. 27 ր. գիշ., Էջմիածին 5 ժ. 40 ր. գիշ., Ուլուխանլու 6 ժ. 15 ր. առ., Երևան 7 ժ. 23 ր. առաւօտեան:

ԲՈՐԺՈՄ.—Մարդատար գնացքը № 7/8—7 ժ. 58 ր. առ., հասնում է Գօրի 10 ժ. 43 ր., Բօրժօմ 1 ժ. 39 ր. ցեր., Մարդատար գնացքը № 9/10—3 ժ. 5 ր. ցեր., հասնում է Գօրի 5 ժ. 48 ր. ցեր., Բօրժօմ 8 ժ. 41 ր. երեկոյեան:

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—Արագ գնացքը № 1—9 ժ. 56 ր. եր.: Պօստատար գնացքը № 3—8 ժ. 56 ր. առ.: Մարդատար գնացքը № 5—5 ժ. 51 ր. ցեր.: Խառն գնացքը № 107—4 ժ. 56 ր. գիշ.:

ԲԱԹՈՒՄԻՑ.—Արագ գնացքը № 12—9 ժ. 18 ր. առ.: Պօստատար գնացքը № 4—11 ժ. 15 ր. գիշ.: Մարդատար գնացքը № 6—1 ժ. 59 ր. ցեր.: Խառն գնացքը № 106—3 ժ. 40 ր. գիշ.:

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—Պօս. գնացքը № 72/73—7 ժ. 26 ր. առ., Մարդատար-ապրանքատար գնացքը № 74/75—8 ժ. 33 ր. եր.: Մարդ.-ապրանքատար գնացքը № 80/81—12 ժ. 48 ր. ցեր.:

ԲՈՐԺՈՄԻՑ.—Մարդատար գնացքը № 7/8—7 ժ. 8 ր. առ., Մարդատար գնացքը № 9/10—9 ժ. 8 ր. երեկոյեան:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
«606»-Ի ՆԵՐԱՐԿՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ 11—12 ժ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հ.:
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.:
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային:
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.:
Ն. Ց. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վիրաբուժութեան և միզասեռ. հ.:
Գ. Յ. ԳՈՒՐԳԷՆՕՎ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԱՄԲՐՈՒՄՕՎԱ-ՄԵԼԻՔԵԱՆ — 1—2 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.:
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.:
Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—74

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏԱՆԱԿԵՐՏ գիւղի երկսեռ դպրոցի համար հարկաւոր է ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ և ՄԻ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ
Ցանկալի է լինեն ամուսիններ կամ քոյր և եղբայր։ Պայմանների համար դիմել նոյն գիւղի դպրոցի հոգաբարձութեան, Վերին-Ագուլիս։ 558. 3—1

ԱԽԱԼՑԽԱՅԻ հայոց երկսեռ դպրոցների համար
ՀԱՐԿԱՒՈՐ ԵՆ.
Մի ուսուցիչ, որ աւանդելու է օրիորդաց դպրոցում՝ բնագիտութիւն V և VI բաժ. 6 դաս, առողջապահութիւն VI բաժ. 2 դաս, թուաբանութիւն IV, V և VI բաժ. 9 դաս, երկրաչափական ձևագիտութիւն III—VI բաժ. 6 դաս, վայելչագրութիւն 2 դաս, ընդամենը 25 դաս 615 րուբլի ռոճիկով։
Մի ուսուցիչ կամ ուսուցչուհի, որը աւանդելու է օրիորդաց դպրոցում թուաբանութիւն II և III բաժ. 14 դաս, իսկ տղայոց դպրոցում ռուսաց լեզու երկու III բաժ. 10 դաս, ընդամենը 24 դաս 600 ր. ռոճիկով։
Մի ուսուցիչ կամ ուսուցչուհի, որը աւանդելու է տղայոց դպրոցում ռուսաց լեզու II, IV և V բաժ. 22 դաս, ռուսաց պատմութիւն և աշխարհագրութիւն V բաժ. 2 դաս, ընդամենը 24 դաս, 600 ր. ռոճիկով։
Մի վերակացուհի շաբաթական 2 գրութեան դասով 220 րուբլի ռոճիկով։
Դիմել հոգաբարձութեան մինչև օգոստոսի 10-ը։
Նախագահող Պ. Մակարեան
Քարտուղար՝ Ս. Ճզմաճեան
(o.մ.) 551. 3—2

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный.